ԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

3-4.2013

14
ՀԱՄԱԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

36
ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

42
ՄԱՐԶԱՅԻՆ ԽԵԼԱՆԿԱՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

Եվրոպական միություն

Հանդեսը տպագրվում է Եվրոպական միության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող բյուջետային աջակցության շրջանակներում

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

ՍԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԳՆ աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի պետ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՆԱՀԻՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿԳՆ ԿԱԻ փոխտնօրեն

ՌՈԲԵՐՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀՀ ԿԳՆ նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ

ՏԱԹԵՎԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԳՆ ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ-ի տնօրեն

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ ԿԳՆ ԿՏԱԿ տնօրեն

ԱԻԴԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ ԿԳՆ լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի պետ

ՄԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ ԿԳՆ Ուսուցման ազգային հիմնադրամի տնօրեն

ԱՐԱՄ ԱՎԱԳՅԱՆ Գլոբալ զարգացումներ հիմնադրամի նախագահ

ԱՐՄԵՆ ՍԱՐՈՅԱՆ Երևանի ֆինանսաբանկային քոլեջի նախագահ

ՎԱՀԱԳՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԱՊ կրթության և գիտության բաժնի պետ

ՀՐԱՉՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ

Համարի պատասխանատու՝
Շուշան Ղազարյան

Լրագրող՝
Մանե Պապյան

Համակարգչային ձևավորում՝
Մարիամ Պետրոսյան

Սրբագրիչ՝
Գոհար Ամիրբեկյան

Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային կենտրոն

- Սոցիալական գործընկերության եւ միջազգային համագործակցության բաժին
- Ծրագրերի զարգացման բաժին
- Ուսումնամեթոդական բաժին

Հասցե՝ Տիգրան Մեծի 67: Հեռ՝ 572 111: էլ փոստ՝ info@mkuzak.am

Մասնագիտական կրթություն եվ ուսուցում

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

3-4.2013

Ծավալը՝ 6 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 250:

Չափսը՝ 80x100 1/16:
Հասցեն՝ Տիգրան Մեծի, 67: Հեռ. (010) 572 111:
Գինը՝ պայմանագրային:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375111, 67, Tigran Metsi Yerevan, Armenia. Phone 572 111.
Printed 200 samples.

Խմբագրություն ներկայացված նյութերը չեն գրախոսվում:
Արտատպության դեպքում հղումն ամսագրին պարտադիր է:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....4

ԼԱՅՊՑԻԳ

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ է, ԵՐԲ ՔՈ ԿԱՐԱԾ ՇՈՐՆ ԵՍ ՀԱԳՆՈՒՄ.....14
ՈՍԿԵՐՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՆ ԻՄ ՄԵՋ ԾԱՂԿՈՒՄ է...17
ՀԱՂԹԵԼՈՒ ԻՄ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՄԵԾՆ է.....19

ՄԿՈՒՋԱԿ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ ՆԵՐԸ.....21
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ 12 ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....75

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՀՀ կրթության և գիտության նախարարության նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի գործառույթներն ու իրականացված ծրագրերը.....27

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԵՖ-Ը ԿՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՆ.....30
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ» (LIFE) ԾՐԱԳԻՐԸ ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ.....34

ՄԱՐԶԱՅԻՆ ԽՃԱՆԿԱՐ

ՄԿՈՒ ՈԼՈՐՏԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՄ.....36

Հարցազրույց Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Մարատ Սարդարյանի հետ.....52

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՔՈԼԵՋՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՎԵԼԻ ՀԵՇՏ է 57
ՈՒԶՈՒՄ ԵՄ ԳՈՌԱԼ, ԱՍԵԼ՝ ԴԱ ԵՍ ԵՄ ՆԿԱՐԵԼ 60
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 62

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ԱՅՆ ՄԱՐԴԸ, ՈՐԸ ՍԻՐՈՒՄ է ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ՉՊԵՏՔ է ԸՆՏՐԻ ԱՅԼ ՈՒՂԻ.....64
ԱՐՎԵՍՏԸ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ է ԵՎ ԹԵՐԼԵՄԵՋՅԱՆԻ ՔՈԼԵՋԸ ՏԱԼԻՍ է ԱՅԴ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ.....67

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ 70
ԴԵՊԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ 72

ՎԱՐՊԵՏԱՑ ԱՆԿՅՈՒՆ

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՆԿԱՐԻ ՀԵՏ.....77

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2010-2011 ԹԹ. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....80

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....92

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանի երկրորդ միջազգային բուժքույրական համագումարը մեկնարկեց այս տարի սեպտեմբերի 18-ին և տևեց մինչև 20-ը: Այս անգամ համագումարը նվիրված էր «Բուժքույրություն. անցում մասնագիտությունից մասնագիտական պրակտիկային» թեմային:

Համագումարը կազմակերպվում է Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջի, Հայաստանի քույրական գործի կազմակերպիչների ասոցիացիայի, գլոբալ կրթության զարգացման ինստիտուտի և Սիգմա Տետա Տաու միջազգային բուժքույրական միության համագործակցությամբ:

Կոնգրեսը եզակի հնարավորություն է քույրական գործի և առողջապահական համակարգի կրթական և պրակտիկ ոլորտներում աշխատող մասնագետների համար՝ ներկայացնելու և քննարկելու քույրական գործի ներդրումները առողջության պահպանման, խնամքի, պրակտիկայի, կրթության և միջազգային համագործակցության մեջ:

Համագումարի հանդիսավոր բացմանը ներկա է գտնվել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Համագումարի մասնակիցները ներկայացրել են վերջինիս իրենց աշխատանքների ընթացքը, ծրագրերն ու նախագծերը: Տարբեր երկրներից ժամանած առաջատար մասնագետները միմյանց են փոխանցել իրենց փորձն ու գիտելիքները, ինչն ակնհայտորեն կնպաստի մեր երկրում բուժքույրների մասնագիտական որակների ու գիտելիքների մակարդակի բարձրացմանը:

Կառավարության ղեկավարը ողջունել է համագումարի անցկացումը և հույս հայտնել, որ աշխատանքների ընթացքում ներկայացված զեկույցները կօգնեն Հայաստանում տվյալ ոլորտի զարգացմանը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Հետաքրքիր հանդիպում Երևանի պետական հումանիտար քոլեջի հայերենագիտության և մանկավարժության ամբիոնում:

Արաբկիր համայնքի ոստիկանության վետերանների խորհուրդը շարունակական համագործակցությամբ պարբերաբար հանդես է գալիս տարբեր նախաձեռնություններով: Ընդամենը 20 օր է անցել վետերանների խորհրդի 2 անդամների աշխատանքների ցուցադրումից և հետևեց հերթական բովանդակալից օրը: Այս անգամ քոլեջի հյուրը Համո Սահյանի որդին էր՝ Նաիրի Սահյանը:

Հանդիպման առաջին հատվածում ուսանողները ներկայացրին սահյանական իրենց աշխարհը: Ուսանողներին ուղղորդում էր ամբիոնի վարիչ Գ. Մարգարյանը: Մեկը մյուսին հաջորդում էին հասուն, գրավիչ կատարումներ. տպավորված էին բոլորը:

Միջոցառման երկրորդ հատվածում հարց ու պատասխան էր: Հնչում էին տարաբնույթ հարցեր՝ կենսագրական ու անձնական նշանակություն ունեցողներից մինչև ստեղծագործական առնչություններ, տրվում էին հետաքրքիր պատասխաններ: Օրվա ավարտին ամբողջացավ մի դիմանկար՝ մասրենիոտ, ապուպապոտ, մամուռներում կորած արահետներով և իրիկնահացի կանչով:



ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

Ուսուցչի տոնի առիթով ՀՀ կրթության և գիտության նախարարությունում նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանը քոլեջների ու ուսումնարանների մի խումբ մանկավարժների հանձնել է ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրեր և շնորհակալագրեր:

Ողջունելով ներկաներին՝ Մ.Մկրտչյանը շնորհակալություն է հայտնել միջին մասնագիտական կրթության ոլորտի մանկավարժներին՝ նշելով, որ ՄԿՈՒ ոլորտի մանկավարժները կարևոր առաքելություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացի կերտելու հարցում:

«ՄԿՈՒ ոլորտում աշխատող մանկավարժները հաճախ դուրս են մնում պետության ընդհանուր ուշադրությունից, սակայն նրանց կատարած աշխատանքը ոչ պակաս կարևոր ու պատասխանատու է: Միջին մասնագիտական կրթության համակարգում է պատրաստվում տնտեսության իրական հատվածում աշխատող մասնագետը, որը հասարակության զարգացման հիմքն է»,- ընդգծել է նախարարի տեղակալը՝ դիմելով մանկավարժներին:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՅՑ ՎՐԱՍՏԱՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ GmbH-ի) համատեղ ծրագրի շրջանակում ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունը հոկտեմբերի 21-25-ը մասնակցել է «Մարդկային ներուժի զարգացում ՄԿՈՒ ղեկավարների և մասնագետների համար» թեմայով Վրաստանում կայացած ուսուցողական այցին:

Ուսուցողական այցին մասնակցում են նաև Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները:

Այցի ժամանակ քննարկվել են բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների և ժամանակակից մարտահրավերների վերաբերյալ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԳԵՐՄԱՆԻԱ

ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ GmbH-ի) համատեղ ծրագրի շրջանակում ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունը նոյեմբերի 2-ից նոյեմբերի 11-ը մասնակցել է «Մարդկային ներուժի զարգացում ՄԿՈՒ ղեկավարների և մասնագետների համար» թեմայով Գերմանիայում կայացած ուսուցողական այցին:

Ուսուցողական այցին մասնակցել են նաև Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները:

Այցի ընթացքում կազմակերպվել են քննարկումներ՝ սոցիալական գործընկերության և դուալ համակարգի արդյունավետության, ՄԿՈՒ համակարգի ժամանակակից մարտահրավերների վերաբերյալ: Եղել են նաև այցելություններ տարբեր ձեռնարկություններ, այդ թվում ՖԵՍՏՈ, ԲԱՆԳԵՐՏ, ԼՈՒԿԱՍ-ՆՈՒԵԼ, քոլեջներ և ՄԿՈՒ ոլորտը համակարգող մի շարք կազմակերպություններ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Երևանի թիվ 1 արհեստագործական ուսումնարանն այժմ ունի նոր լսարան: Ճապոնիայի կառավարության միջոցներով համալրված լսարանի բացումը տեղի ունեցավ նոր ուսումնական տարվա սկզբին: Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի Հանրապետության դեսպանատան առաջին քարտուղար Կեյսկե Յամագիշին և դեսպանատան հայաստանյան ներկայացուցիչ Արիկո Հասեգավան և ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ:

2008թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով ուսումնարանում իրականացվել է հիմնանորոգում, ձեռք է բերվել գույք-սարքավորում: «Ապագան քոնն է» հասարակական կազմակերպության միջնորդությամբ Ճապոնիայի կառավարության միջոցներով Երևանի համար 1 արհեստագործական ուսումնարանը նյութատեխնիկական նոր միջոցներով է համալրվում:

Արդյունքում քոլեջի կահավորված լսարանները համալրվում են ընդհանուր թվով երեք նոր լսարանով՝ խոհարարի տեսական ուսուցման, ամենաժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ վարսահարդարի ու կարի տեխնոլոգիայի կաբինետներ, ինչպես նաև մասնակի կահավորված խառատային արհեստանոց, ուսուցչանոց, բուժկետ: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ ճաղապատվել են ուսումնական մասնաշենքի առաջին հարկի բոլոր լսարանները:

Միջոցառմանը ներկա ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Աբրահամյանը կարևորեց նմանատիպ նախաձեռնությունը և շնորհակալություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը նյութատեխնիկական այս արժեքավոր օժանդակության համար և հույս հայտնեց, որ այն կլինի շարունակական և համագործակցության արդյունքում կլինեն ժամանակակից պահանջները բավարարող ուսումնական նաև այլ հաստատություններ:

ՇՆՈՐՀԻՎ ՈՒԿՐԱԻՆԱԲՆԱԿ ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՎԵԼ Է ՎԱՐԴԵՆԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԸ

Վարդենիսի պետական քոլեջն ունի 320 ուսանող, որոնք մինչ այս ուսումնական տարին կրթություն էին ստանում, մեղմ ասած, ոչ բարվոք պայմաններում: Վարդենիս քաղաքի նախկին բնակիչ, Ուկրաինայի վաստակավոր շինարար, տեխնիկական գիտությունների դոկտոր Գագիկ Բաղեյանի նախաձեռնությամբ և ներդրումներով բոլորովին վերջերս հիմնանորոգվել և շահառուների օգտագործմանն են հանձնվել Վարդենիսի պետական քոլեջի առաջին և երկրորդ հարկերը: Ուսումնական այս հաստատությունը, ի պատիվ գործարարի, անվանակոչվել է Գագիկ Բաղեյանի հոր՝ Վանիկ Բաղեյանի անվամբ. այս տարի նա բոլորում է 100 տարին: Վարդենիսի պետական քոլեջի կազմում գործում է նաև Վարդենիսի արհեստագործական ուսումնարանը:

«Ուսումնական հաստատությունն իր գործունեության ընթացքում երբևէ կապիտալ չէր նորոգվել: Կարող ենք ասել, որ մեր հաստատությունն այժմ ունի ուսուցման ամենաժամանակակից պայմանները, որոնց մասին դեռևս մեկ տարի առաջ դժվար էր մտածելը: Մենք վստահ ենք, որ հաստատության մյուս երկու հարկերի դասասենյակները մոտ ապագայում նույնպես կբարեկարգվեն»,- նշեց Վարդենիսի պետական քոլեջի տնօրեն Արամ Կարապետյանը: Քոլեջի բարեկարգման և վերազինման ծրագիրը լինելու է շարունակական,- իր խոսքում հաստատեց Գագիկ Բաղեյանը,- մենք ընտանիքով ուզում էինք նշել մեր երջանկահիշատակ ծնողի ծննդյան հարյուրամյա տարեդարձը: Քանի որ իմ հայրն իր ծննդյան օրերին չէր ուզում նվերներ ընդունել, հակառակը, ինքն էր նվիրում, մենք, հետևելով նրար, որոշեցինք մեր նվերը մատուցել հասարակությանը՝ մեր համաքաղաքացիներին»,- նշեց բարերարը:

Գագիկ Բաղեյանը նախատեսել է նաև սահմանել կրթաթոշակ, որը կշնորհվի 7 տարբեր մասնագիտական խմբերում սովորող լավագույն ուսանողներին:



ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԼՈՌՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



Լոռու մարզ այցի ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը եղավ նաև եղավ Վանաձորի պետական բժշկական քոլեջում: Ա.Աշոտյանը ծանոթացավ շենքային պայմաններին, առկա խնդիրներին: Ըստ հաստատության տնօրենի՝ քոլեջի շենքային պայմանները բավարար են, ուսումնական այս հաստա-տությունումսովորել ցանկացողները շատ են. ներկայում քոլեջն ունի շուրջ 700 ուսանող:

Հատկանշական է, որ քոլեջում ուսանում են նաև բարձրագույն կրթությամբ ուսանողներ, ինչն ըստ նախարարի, ևս մեկ անգամ վկայում է, որ միջին մասնագիտական կրթությունը նույնպես պահանջված է մեր երկրում:

Շիրակի մարզի կրթության ոլորտի խնդիրներին տեղում ծանոթանալու և առկա հարցերը քննարկելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանն աշխատանքային այցով եղել է նաև Գյումրում, այս անգամ նախարարն այցելել է Գյումրու պետական բժշկական քոլեջ: Ուսանողների ու մանկավարժների հետ հանդիպման ժամանակ հարց է բարձրացվել բժշկական քոլեջը ԿԳՆ ենթա-կայության ներքո տեղափոխելու պատճառների վերաբերյալ, որին ի պատասխան՝ նախարար Աշոտյանը նշել է. «Կրթության համակարգում քաղաքականությունը պետք է միասնական լինի՝ սկսած ուսանողների իրավունքներից մինչև կրթական ծրագրեր»:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱՐՑԱԽՆ ԻՄՆ ԵՆ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհրդի մի խումբ անդամներ 2013թ. հոկտեմբերի 27-ից 30-ը ճանաչողական այցելությամբ եղան Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Այցի նպատակն էր երկու հանրապետությունների պատանիների մեջ սերմանել միասնականության և համագործակցության գաղափարը, ամրապնդել ռազմահայրենասիրական դաստիարակությունը, ծանոթանալ Արցախի մշակութային և պատմական արժեքներին, կենցաղին, ավանդույթներին ու սովորույթներին:

Արցախցի հասակակիցները ուսանողներին աղ ու հացով դիմավորեցին Գանձասարի համալիրում, որտեղ միասին անցկացրեցին չորս անմոռանալի օր: Քառօրյա այցի ընթացքում կազմակերպվեցին այցելություններ թանգարաններ, պատմական վայրեր, ինչպես նաև զորամաս, որտեղ ուսանողները ծանոթացան ծառայողների առօրյային, զենքի տեսակներին և մարտական տանկերին:

Ծրագրի շրջանակներում ուսանողները հանդիպում ունեցան Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի հետ. զրույցն անկաշկանդ էր, ուսանելի և ոգևորող: Տպավորիչ էր արցախյան պատերազմի մասնակից, առաջին կարգի հաշմանդամ Դավիթ Հակոբյանի հետ հանդիպումը: Դավիթը պատմում էր, թե ինչպես կարողացավ տասնչորս տարեկան հասակում 12 տարեկան ընկերների հետ զենք վերցնել և մասնակցել հայրենիքի պաշտպանությանը:

Այցն ավարտվեց Շուշիի Ս.Ղազանչեցոնց եկեղեցում: Տխուր էր բաժանումը: Յուրաքանչյուր պատանի իր մեջ կրում էր միասնաբար անկախության համար պայքարելու և սեփական երկրին տեր կանգնելու աննկուն կամքը:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

2012-2013 ուստարվա Գյումրու նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև անցկացված սպորտային մրցաշարի մրցանակաբաշխությունը կայացավ նոյեմբերի 19-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում:

Ուսումնարան նախաձեռնությամբ իրականացրած մրցաշարը նպատակ ուներ ապահովելու Գյումրու ՄԿՈՒ հաստատությունների համագործակցությունը, ուսանողների միջև ստեղծել ընկերական կապեր: 2013 թվականի հունվարի 17-ին ՄԿՈՒ 4 հաստատությունների միջև կնքվել էր համագործակցության հուշագիր:

Մրցաշարը մեկնարկվեց 2012 թ. դեկտեմբերի 10-ին և ավարտվեց հետևյալ արդյունքներով՝

• Մինիֆուտբոլ խաղաձևում՝ առաջին տեղում՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան, երկրորդ տեղում՝ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ, երրորդ տեղում՝ Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան:

• Վոլեյբոլի խաղաձևում՝ առաջին տեղում՝ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ, երկրորդ տեղում՝ Գյումրու տեխնիկական պետական քոլեջ, երրորդ տեղում՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան:

• Սեղանի թենիս խաղաձևում՝ առաջին տեղում՝ Գոհար Ղարագոզյան (Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան), երկրորդ տեղում՝ Դայանա Կոբալյան (Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան), երրորդ տեղում՝ Մարինե Մանուկյան (Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան):

• Սեղանի թենիս խաղաձևում՝ առաջին տեղում՝ Արտուշ Գասպարյան (Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ), երկրորդ տեղում՝ Կարեն Ադանալյան (Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ), երրորդ տեղում՝ Ռաֆիկ Գրիգորյան (Գյումրու տեխնիկական պետական քոլեջ):

• Շախմատ խաղաձևում՝ առաջին տեղում՝ Կիմա Բագրատյան (Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան), երկրորդ տեղում՝ Արևիկ Գինոսյան (Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ), երրորդ տեղում՝ Լուսինե Տոնոյան (Գյումրու տեխնիկական պետական քոլեջ):

• Շախմատ խաղաձևում՝ առաջին տեղում՝ Հովհաննես Չախոյան (Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան), երկրորդ տեղում՝ Աշոտ Զադոյան (Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան), երրորդ տեղում՝ Տիգրան Զավատով (Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան):

«Голос Армении» ռուսալեզու օրաթերթն անդրադարձել է ՄԿՈՒ ոլորտին հետևյալ հոդվածաշարով՝

На чемпионат профмастерства в Лейпциг (15 июнь) - Հարցազրույց «Աշխարհի հմտություններ 2013» միջազգային մրցույթի մասնակիցների հետ:

Нужна своя модель (20 июль)- Այս հոդվածն անդրադառնում է գերմանական Լայպցիգ քաղաքում տեղի ունեցած «Աշխարհի հմտություններ 2013» միջազգային մրցույթի ամփոփմանը: Հարցազրույցներ մրցույթի հայկական պատվիրակության ներկայացուցիչների՝ ՄԿՈՒԶԱԿ-ի տնօրեն Տաթևիկ Գասպարյանի, GIZ-ի ներկայացուցիչ Յուլյա Ստակյանի հետ:

Профобразование: стереотипы меняются (24 август) - Հարցազրույց Ռոբերտ Աբրահամ-յանի հետ:

Кадры для ЛЕГПРОМА (24 сентябрь) - Հոդվածն անդրադառնում է թեթև արդյունա-բերության քոլեջի գործունեությանը և արդիական խնդիրներին:

ՄԱՄՈՒԼԸ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Наш потенциал (19 октябрь) - Հոդվածն անդրադառնում է «Աշխարհի հմտություններ 2013» միջազգային մրցույթի ամփոփում - քննարկմանը, որն անցկացվեց կլոր սեղանի և էքսպոյի ֆորմատով:

«Պահանջված է ոչ բարձրագույնը»-Բարձրագո՞ւյն, թե՞ միջին մասնագիտական կամ արհեստագործական կրթությունն է ավելի պահանջված Հայաստանում: Աշխատաշուկայում կա մասնագետների պահանջ, որը չեն ավարարում բուհերը: www.civilnet.am էլեկտրոնային կայքէջը օգոստոսի 20-ին հարցազրույց է ունեցել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի պետ Սասուն Համբարձումյանի հետ:

«Մինչեւ 2017 թվականը նախնական և միջին մասնագիտական կրթությունն ամբողջությամբ կդառնա անվճար»- Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրով մինչև 2017 թվականը նախատեսվում է երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում կատարել երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանը: Նախնական (արհեստագործական) և մասնագիտական կրթության համակարգի առկա վիճակի, դրա խնդիրների, ինչպես նաև ձեռքբերումների ու ծրագրերի մասին «Արմենպրեսը» օգոստոսի 8-ին զրուցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագի-տական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի պետ Սասուն Համբարձումյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ «ԱՇԽԱՐՀԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

«Աշխարհի հմտություններ» (World Skills International) միջազգային կազմակերպությունը հիմնադրվել է 1946թ. Իսպանիայում՝ նպատակ ունենալով հավաստիացնել երիտասարդներին, նրանց ծնողներին և գործատուներին, որ նրանց ապագան անմիջականորեն կախված է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության արդյունավետ համակարգից: Այդ նպատակով 1950թ. առաջին անգամ Մադրիդում կազմակերպվեց «Աշխարհի հմտություններ» միջազգային 1-ին մրցույթը՝ Իսպանիայի և Պորտուգալիայի մրցակիցների մասնակցությամբ:

Մրցույթները կազմակերպվում են 2 տարին մեկ անգամ: Ներկայումս «Աշխարհի հմտություններ» միջազգային կազմակերպությանը անդամակցում է 65 երկիր: Հայաստանը անդամակցել է կազմակերպությանը 2012 թվականից՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ GmbH-ի) նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցության շնորհիվ: Հայաստանը ներկայացնող կառույցը մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնն է (ՄԿՈՒԶԱԿ), որին հանձնվել է անդամակցության մասին հավաստագիր՝ «Աշխարհի հմտություններ» միջազգային կազմակերպության կողմից:

2013թ. հունիսի 26-ից հուլիսի 8-ը Գերմանիայի դաշնային հանրապետության Լայպցիգ քաղաքում կայացավ «Աշխարհի հմտություններ» 42- րդ մրցույթը: Մրցույթին մասնակցում էին 53 երկիր, 999 մրցակից՝ 46 հմտություններով, 964 փորձագետ: Հայաստանի ազգային թիմը մասնակցում էր 3 հմտություններով՝ ոսկերչություն, խոհարարություն և նորաձևության տեխնոլոգիա:

Հայաստանի ազգային թիմի կազմը այսպիսին էր.

1. Պաշտոնական պատվիրակ՝ Տաթևիկ Գասպարյան, ՄԿՈՒԶԱԿ, տնօրեն,
2.Տեխնիկական պատվիրակ՝ Վահագն Հովհաննիսյան, Առևտրաարդյունաբերական պալատ, ծրագրերի ղեկավար,

3.Խոհարարության փորձագետ՝ Գարիկ Գևորգյան, «Հայկական խոհանոցի ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ, գործադիր տնօրեն,

4.Ոսկերչության փորձագետ՝ Լիլիթ Պետրոսյան, Երևանի ոսկերչական գործարան, տեխնիկական բաժնի պետ,

5.Նորաձևության փորձագետ՝ Սեդա Մանուկյան, ԱՏԵՔՍ նորաձևության կենտրոն, դիզայներ,

6.Խոհարարության մասնակից՝ Արայիկ Ամզայան, Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջ,

7.Ոսկերչության մասնակից՝ Արամ Ավետիսյան, Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ,

8.Նորաձևության մասնակից՝ Արփինե Ղուկասյան, Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ,

9.Թիմ լիդեր՝ Կարինե Անտոնյան Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ:

Գրանցվեցին հետևյալ արդյունքները.

1.Ոսկերչություն. 467 միավոր, 61 միավոր պակաս մրցույթում գրանցված առավելագույն միավորից,

2.Խոհարարություն. 456 միավոր, 87 միավոր պակաս մրցույթում գրանցված առավելագույն միավորից,

3.Նորաձևության տեխնոլոգիա. 450 միավոր, 90 միավոր պակաս մրցույթում գրանցված առավելագույն միավորից:

Հայաստանի ազգային թիմի լավագույն մասնակից ճանաչվեց Արամ Ավետիսյանը:

«Աշխարհի հմտություններ» մրցույթին Հայաստանի մասնակցությունը արձանագրեց այն փաստը, որ ՄԿՈՒ ոլորտում բարեփոխումների ընթացքը կարող է գնահատվել բավարար:

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄՐՑՈՒՅԹԸ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՄՈԼՈՐԱԿ Է



«Համաշխարհային հմտություններ 2013» մասնագիտական հմտությունների միջազգային մրցույթը, որը տեղի ունեցավ այս ամառ և որին մասնակցում էր Հայաստանի պատվիրակությունը, արդեն անցյալում է, սակայն առջևում է հաջորդ մրցույթը, որին Հայաստանի ներկայությունը ցանկալի կլիներ և կաջակցեր ՄԿՈՒ ոլորտի ուսանողներին:

GIZ գերմանական միջազգային կազմակերպությունը, լինելով մրցույթի հայկական կողմի գլխավոր հովանավորը, հոկտեմբերի 16-ին Երևանում կազմակերպել էր քննարկում աշխատաժողով «Համաշխարհային հմտություններ Հայաստան»՝ հնարավորություն ընձեռելով հայկական պատվիրակությանը, գործատուներին, ԿԳ նախարարության, ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչներին, միջազգային փորձագետներին միասին քննարկելու «Համաշխարհային հմտություններ» միջազգային մրցույթում ձեռք բերված փորձը և ապագայի համատեղ ծրագրերը:

Աշխատաժողովի ընթացքում կազմակերպվեց նաև Հայաստանի քոլեջների և ուսումնարանների ուսանողների էքսպո-ցուցահանդես:

«Համաշխարհային հմտություններ» մրցույթի մասնակցության համար հովանավորելը GIZ-ի պատմության մեջ առաջին անգամ է, մրցույթին մասնակցելը առաջնային կարևորություն է ունենում տարբեր երկրներում ինչպես գործարարների, այնպես էլ պետության շրջանակներում: Յուրաքանչյուր երկիր ինքն է փնտրում ուղիներ, թե ինչպես գտնի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, որպեսզի մասնակցի այս համաշխարհային կարևորության մրցույթին: Իմ կարծիքով շատ կարևոր է, որ հաջորդ անգամները կներգրավվեն գործատուները և ՀՀ կառավարությունը, որպեսզի հովանավորեն հայկական պատվիրակությանը: Ներդրումները՝ փոքր, թե մեծ լինեն, կլինեն իրենց լուման երիտասարդ մասնագետների սերնդի ապագայի զարգացման համար»,- նշեց «Համաշխարհային հմտություններ»

մրցույթի խորհրդատվության և ռազմավարության հարցերով ղեկավար Դենի Գաուխ (Գերմանիա):

«Համաշխարհային հմտություններ 2013» մրցույթի Հայաստանի պաշտոնական պատվիրակ, ՄԿՈՒԶԱԿ-ի տնօրեն Տաթևիկ Գասպարյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց GIZ-ին, որ Հայաստանին տրվեց հնարավորություն՝ դառնալու մի կառույցի անդամ, որին անդամակցում են ավելի քան 65 երկիր. «Համաշխարհային հմտություններ» մրցույթը վարպետների առանձին մոլորակ էր, որտեղ յուրաքանչյուր մասնակից փորձում էր ցույց տալ իր կարողություններն ու հմտությունները: Այս տարի մասնակցած 51 երկրներից Հայաստանը 45-րդ էր՝ իր հետևում թողնելով Ռուսաստանին, Վրաստանին, Արաբական էմիրություններին: Եվ սա այն դեպքում, երբ մենք պատրաստվեցինք մեծ հապճեպությամբ: Մեզ այս պահին ցանկացած օգնություն մեծ աջակցություն է»:

Մրցույթի պատվիրակության մեջ ներառված են ինչպես ԿԳ նախարարության ներկայացուցիչներ՝ ի դեմ ՄԿՈՒԶԱԿ-ի, այնպես էլ գործատուների կողմից՝ ի դեմս Առևտրաարդյունաբերական պալատի ծրագրերի ղեկավար Վահագն Հովհաննիսյանի, ով «Համաշխարհային հմտություններ 2013» մրցույթի տեխնիկական պատվիրակն էր:

«Այս մրցույթը մի հարթակ է, որտեղ երկրները միմյանց հետ մրցելով, սովորում են միմյանցից, ինչպես կրթական, այնպես էլ գործարար միջավայրում: Գործատուների համար ձեռնտու է մասնակցել այս մրցույթին՝ որպես հովանավոր մի քանի պատճառներով. սոցիալական ներգրավվածությունը, գովազդը, տեսնել միջազգային փորձը, գնահատել մրցակիցների պոտենցիալը, ծանոթանալ նոր տեխնոլոգիաներին, որոնք կիրառվում են միջազգային պրակտիկայում», նշեց իր խոսքում Վահագն Հովհաննիսյանը:

Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ ՆՄՄԿ վարչության պետ

Ռոբերտ Աբրահամյանն իր խոսքում անդրադարձավ ՄԿՈՒ ոլորտի առջև ծառացած արդի խնդիրները. «Անկախ երկրների զարգացվածությանը՝ ՄԿՈՒ ոլորտն ունի հիմնական խնդիրներ՝ գրավչություն և երիտասարդների քիչ ներգրավվածություն, գործատուների կողմից ոչ բավարար ուշադրություն: GIZ-ի հովանավորությամբ Հայաստանը կարողացավ մասնակից դառնալ նման համաշխարհային կարևորություն ունեցող մրցույթին, որի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում: Այս մրցույթից հետո ես մեկ անգամ ևս համոզվեցի, որ Հայաստանը ՄԿՈՒ ոլորտում արձանագրել է մեծ հաջողություններ, սակայն միևնույն ժամանակ պարզ դարձան այն բացթողումները, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնենք: Առաջինը գործատուների համագործակցությունն է: «Համաշխարհային հմտություններ» մրցույթին մյուս բոլոր երկրներում գործարար աշխարհի ներկայությունը հավաստում է այն, որ ՄԿՈՒ ոլորտը մեծ հետաքրքրություն է առաջացնում նրանց մոտ»:

Ինչպես ասում է հայկական ասացվածքը, լավ սկիզբը գործի կեսն է: Այս տարի Կովկասի երկու երկրները՝ Հայաստանը և Վրաստանը, ունեցան այս մեծ հնարավորությունը՝ մասնակցելու միջազգային մրցույթի, սակայն կանգնել այսքանին հասնելով Դենի Գաուխի կարծիքով ամենավատ որոշումը կլինի. «Հայաստանում մեծ պոտենցիալ կա, և լքելով, այլևս չմասնակցելով «Համաշխարհային

հմտություններ» մրցույթին՝ այդ պոտենցիալն ունեցող մանսագետները չեն կարողանա առաջ գնալ և զարգացնել իրենց հմտությունները: Քանի որ մասնակցել «Համաշխարհային հմտություններ» մրցույթին այլ բան է, բայց լինել դրա մի մասն ընդհանրապես այլ մակարդակ է: Մի լավ օրինակ կա, որ ես կուզեի նշել, երբ լողորդը լողալով հասնում է լճի մեջտեղը, մտածում է՝ ես հոգնեցի, ավելի լավ է ես հետ գնամ: Եթե Հայաստանը հրաժարվի մասնակցել հաջորդ մրցույթին, նա կդառնա այդ լողորդը: Խնդիրն այն է, որ եթե որոշես հետ դառնալ, դու այնուամենայնիվ պետք է լողաս նույն հեռավորությունը, որը կարող էիր անել՝ հասնելու քո նպատակին»,- ասում է «Համաշխարհային հմտություններ» մրցույթի խորհրդատվության և ռազմավարության հարցերով գերմանացի ղեկավար Դենի Գաուխը:

Նրա գործընկեր գերմանական GIZ ծրագրի ավագ ղեկավար Միխաելա Օպֆերմանն-Գերտները նշեց. «Մենք սկսել ենք «Համաշխարհային հմտություններ» մրցույթը Հայաստանում և Վրաստանում միևնույն ժամանակամիջոցում, այդ իսկ պատճառով կարող ենք ասել, որ այս երկու երկրները գտնվում են միևնույն մակարդակում: Ադրբեջանը չներառվեց GIZ հովանավորության մեջ, քանի որ Գերմանիայի կառավարությունը, ով հովանավորում է GIZ-ը, համարեց, որ Ադրբեջանի կառավարությունն ի վիճակի է մանսակցել մրցույթին իր ուժերով, եթե ցանկանա: Սակայն Ադրբեջանը ներկայացուցիչ չունեցավ «Համաշխարհային հմտություններ 2013ե մրցույթին»:

Մասնակցողների թիմի ղեկավար, Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ներկայացուցիչ Կարինե Անտոնյանը, «Ատեքս» նորաձևության կենտրոնի նորաձևության փորձագետ Սեդա Մանուկյանը, Երևանի ոսկերչական գործարանի տեխնիկական բաժնի պետ, փորձագետ Լիլիթ Պետրոսյանը ևս ներկա էին աշխատաժողովին, և բոլորն էլ միաձայն պնդեցին, որ «Համաշխարհային հմտություններ» մրցույթը մեծ հնարավորություն է ստեղծում ՄԿՈՒ հաստատությունների ուսանողներին՝ ապագա մասնագետներին, ձեռք բերելու հմտություններ և կարողություններ, ինչպես նաև միջազգային փորձին ծանոթանալու հնարավորություն:

Աշխատաժողովին ներկա էին նաև մրցույթի մասնակիցները՝ Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջի ուսանող, ապագա խոհարար Արայիկ Ամզայանը, Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ուսանող հագուստի դիզայներ Արփինե Ղուկասյանը և Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանող ոսկերիչ Արամ Ավետիսյանը:

«Մրցույթը տվեց միջազգային մեծ փորձը և գիտելիքը: Հենց սկզբից, հենց առաջին քայ-

լից, որ արեցի այդ մրցույթում, մեծ փորձ էր ինձ համար: Շատ հետաքրքրեց ծրագրի մեծությունը, թե ինչքան լուրջ է դիտվում աշխարհի տարբեր կազմակերպությունների կողմից, ինչը մեզ մոտ չի նկատվում»,- պատմում է Արամ Ավետիսյանը:

Արփինե Ղուկասյանը մեզ հետ քննարկեց հայկական պատվիրակության ոչ այդքան լավ արդյունքները. «Մենք պարտվեցինք, քանի որ մեզ մոտ չկար այն փորձը, որ կարողանայինք մյուսների հետ պայքարել: Մյուս երկրների մասնակիցները երկու տարի շարունակ պատրաստվել էին, իսկ մենք ընդամենը վեց ամիս, որից միայն երկու ամիսն ենք պատրաստվել: «Համաշխարհային հմտություններ 2013» մրցույթից հետո կարելի է ասել մեծ փոփոխություններ են եղել իմ մեջ, բայց ոչ այնքան մեծ, որքան սպասում էի: Քանի որ մինչ մեր գնալը, բոլորիս հետաքրքրում էր, թե ինչ է լինելու, և յուրաքանչյուրն ուներ իմ պատկերացումներն ու ակնկալիքները: Կոնկրետ ես մտածում էի, որ նման մրցույթից հետո մեծ պահանջարկ կունենամ տարբեր կազմակերպությունների կողմից»:

«Համաշխարհային հմտություններ» մրցույթի ամենաերիտասարդ մասնակիցը հայկական պատվիրակության ներկայացուցիչ 17-ամյա Արայիկ Ամզայանն է: «Իմ ամենամեծ ձեռքբերումը հենց մասնակցելն էր «Համաշխարհային հմտություններ» մրցույթին: Գիտակցելով, որ ես ամենաերիտասարդ մասնակիցն եմ, ներկայացնում եմ ամենափոքր երկրներից մեկը՝ այնուամենայնիվ հավասար իրավունքներով եմ ներկայանում մրցույթին: «Համաշխարհային հմտություններ» մրցույթն ինձ տվեց ինքնավստահություն. ես հաստատ գիտեմ՝ իմանալով, որ ես մասնակցել եմ համաշխարհային մրցույթին խոհարարության ոլորտում, գործատուների կողմից կարժանանամ վստահության: Այժմ նոր աշխատանքի առաջարկ եմ ստացել իտալական ռեստորանում: Այդ առաջարկության հիմնական պատճառը դարձել է այն, որ ես մասնակցել եմ այս համաշխարհային մրցույթին»:

GIZ-ը կազմակերպեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների ներկայացուցիչների համար երկու եռակողմ հանդիպումներ Վրաստանում և Գերմանիայում: Այդ հանդիպումների ժամանակ կրթության ոլորտին վերաբերող մի շարք այլ հարցերի շրջանակում ներառված էր նաև «Համաշխարհային հմտություններ» մրցույթին մասնակցման արդյունքների քննարկումը, փորձի փոխանակումը և հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է «Համաշխարհային հմտություններ» միջազգային կազմակերպությանը 2012 թվականից՝ ի դեմս ՀՀ ԿԳ նախարարության ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի: Մասնագիտական հաստատությունների ուսանողները, մասնակցելով այս մրցույթին, հնարավորություն են ունենում ներկայանալ և մրցակցել իրենց հմտություններով աշխարհի 65 այլ երկրների ուսանողների հետ՝ ազգային փուլում հաղթող ճանաչվելու դեպքում:

Մրցույթի նախընտրական փուլը, որը կայացել էր 2013թ. հոկտեմբերի 22-ին՝ երեք մասնագիտությունների գծով, հաղթահարել են հետևյալ մասնակիցները:

Նորաձևության տեխնոլոգիա

Օհանյան Մարիամ (Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ), Խաչատրյան Արմինե (Աբովյանի կրթահամալիր), Հարությունյան Մանե և Կարապետյան Լյուսի (Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ), Տոկարևա Իրինա (Երևանի հումանիտար-տեխնիկական պետական քոլեջ):

Ոսկերչություն

Գալոյան Լևոն (Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարան), Գեղամյան Եղիշե (Երևանի տեխնոլոգիական պետական քոլեջ), Գևորգյան Արթուր և Բաղալյան Սամվել (Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ):

Խոհարարություն

Սողոմոնյան Դավիթ (Երևանի թիվ 4 արհեստագործական ուսումնարան), Մանուկյան Հակոբ և Աղաբեկյան Տիգրան (Երևանի թիվ 6 արհեստագործական ուսումնարան), Եվտուխովա Քրիստինե և Սահակյան Վալերիա (Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ, Մեսրոպյան Մերի (Հրազդանի արհեստագործական ուսումնարան):

Մրցույթի ազգային փուլը անցկացվեց նոյեմբերի 22-23-ը՝ Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում, իսկ ոսկերչություն մասնագիտության մրցույթը անցկացվեց Երևանի ոսկերչական գործարանի ուսումնական կենտրոնում: Յուրաքանչյուր մասնագիտության գծով հաղթող ճանաչվեցին մեկական ուսանող՝ Նորաձևության մասնագիտության գծով Կարապետյան Լյուսի (Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ), ոսկերչության գծով՝ Գևորգյան Արթուր (Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ) և խոհարարության գծով՝ Մեսրոպյան Մերի (Հրազդանի արհեստագործական ուսումնարան):

Մրցույթի մասնակից և լավագույնս աչքի ընկած ուսանողները ՀՀ կրթության և գիտության նախարարից ստացան մրցանակներ:

Արմեն Աշոտյանը նշեց, որ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում և հաջորդ ուսումնական տարվանից այս համակարգին հատկացվող անճար տեղերն էականորեն ավելանալու է:

Նորաձևության մրցույթի հաղթող Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի երրորդ կուրսի ուսանող 19-ամյա Լյուսի Կարապետյան.

«Երեք հոգի ներկայացնում էր մեր քոլեջը, և ես հաղթեցի, որի համար շատ ուրախ եմ: Միջազգային մրցույթում կաշխատեմ Հայաստանը շատ լավ ներկայացնել իմ ուժերի սահմաններում: Անպայման պետք է ձգտեմ, որ հաղթեմ»,- ոգևորված պատմում է Լյուսին:

Ոսկերչության մրցույթի հաղթող Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի երկրորդ կուրսի ուսանող Արթուր Գևորգյան.

«Մրցույթում կային դժվարություններ, սակայն հաղթահարեցի քոլեջում ստացած գիտելիքներս ինձ շատ օգնեցին: Համաշխարհային հմտություններ մրցույթին գնում եմ հաղթելու համար, հուսով եմ՝ սպասելիքները կարդարացվեն»,- համոզված է Արթուրը:

Խոհարարության մրցույթի հաղթող Հրազդանի արհեստագործական ուսումնարանի 3-րդ կուրսի ուսանող Մերի Մեսրոպյան.

«Սկզբում չէի հավատում, բայց արդեն սկսել եմ հավատալ, որ հայտնի եմ դարձել: Պատրաստվում եմ Հայաստանը պատվով ներկայացնելու, եթե անգամ չհաղթեմ, բայց ուզում եմ, որ բոլորն իմանան, որ Հայաստանը մասնակցում է նման մրցույթների և դրանց շնորհիվ էլ Հայաստանը քիչ-քիչ առաջ կգնա»,- վստահ է Մերին:

Երեք մասնագիտությունների գծով մրցույթում հաղթող ճանաչված ուսանողները հնարավորություն կստանան մասնակցել 2015թ. Սան Պաուլոյում կայանալիք «Համաշխարհային հմտություններ» մրցույթին:

ՄԿՈՒ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵԼԱՑՐԵԼ Է ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ

Ներկայումս մասնագիտական կրթության ոլորտում սովորում է 35 000 մարդ, որոնցից 7000-ը՝ արհեստագործական համակարգում: 2013-2014թթ. ուսումնական տարվա նորությունների մասին «Մասնագիտական կրթություն և ուսուցում» հանդեսը խոսեց ՀՀ ԿԳ նախարարության նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Աբրահամյանի հետ:

Այս ուսումնական տարին նշանավորվեց նրանով, որ գրեթե բոլոր ՄԿՈՒ հաստատությունները, որոնք չէին գտնվում ԿԳՆ ենթակայության տակ, անցան նախարարության ենթակայության տակ: Ի՞նչ տվեց դա ուսումնական հաստատություններին և նախարարությանը:

Բացի մի քանի խիստ մասնագիտացված քոլեջներից, բոլոր մասնագիտական ուսումնական հաստատություններն այս տարվանից գործելու են կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ: Նպատակն է՝ մի կենտրոնից ղեկավարել բոլոր հաստատությունները, համաչափ վերահսկողություն իրականացնել դրանց կողմից մատուցվող կրթության որակի նկատմամբ, իրականացնել հավասարաչափ ֆինանսավորում: Այս ուսումնական տարում ուսանողների թվի կտրուկ տատանում չի եղել: Թեև կարելի է արձանագրել մի տենդենց, որ տարեցտարի ավելանում են հիմնական կրթություն ստացած դիմորդների թիվը ՄԿՈՒ հաստատություններ, իսկ միջնակարգ կրթություն ստացածներինը նվազում է: Միգուցե պատճառն այն է, որ բուհ ընդունվելու նպատակ ունեցող երիտասարդները հիմնականում շարունակում են սովորել ավագ դպրոցում, ոչ թե մասնագիտական ուսումնական հաստատությունում:

ՄԿՈՒ հաստատություններում շատ են այն ուսանողները, որոնք ընդունվել են քոլեջ, որպեսզի հետագայում ընդունվեն բուհ 2-3 կուրս: ԿԳՆ փաթեթ է մշակում, որպեսզի հանի այդ կետը: Չի՞ կրճատի դա արդյոք ՄԿՈՒ ոլորտում դիմորդների թիվը:

2014թ. ուսումնական տարվանից մենք նպատակ ունենք ստեղծել հավասար պայմաններ բուհ ընդունվելու համար՝ թե ՄԿՈՒ հաստատությունների, թե ավագ դպրոցների շրջանավարտները պետք է ունենան հավասար հնարավորություն: Օրենսդրական այս նախաձեռնությունը բխում է նաև ԿԳՆ 2013-2014թթ. հակակոռուպցիոն ծրագրի դրույթներից: Չեմ կարծում, որ այս փոփոխությունը կնվազեցնի երիտասարդների հետաքրքրությունը քոլեջների և ուսումնարանների նկատմամբ:

Կրթության և գիտության նախարարությունը պլանավորում է 2014 թվականից Հայաստանում պարտադիր կրթության նշաձողը բարձրացնել հիմնականից միջնակարգի: Ի՞նչ ազդեցություն կունենա այս որոշումը մասնագիտական կրթության համակարգի վրա:

Վիճակագրության համաձայն՝ 9-րդ դասարանն ավարտելուց հետո շուրջ 4000-5000 երիտասարդ այլևս չի շարունակում կրթությունը: 2014 ուսումնական տարվանից նախատեսվում է, որ նշվածս դպրոցականները նույնպես կընդգրկվեն կամ ավագ դպրոցներում կամ քոլեջներում և ուսումնարաններում: Նրանց ցանկացած ընտրության պարագայում մենք

ունենք ուսանողներին տեղավորելու և նրանց կրթությունը կազմակերպելու պոտենցիալ, այսինքն՝ այն ընդունելությունը, որ մենք իրականացնում ենք մասնագիտական կրթության համակարգում սահմանային չէ, մենք ունենք հնարավորություն ավելի շատ ուսանողներ ընդունելու: Հիմա, երբ աշակերտը հնարավորություն կունենա ընտրելու՝ «սովորել-չսովորելու» փոխարեն «սովորել՝ որտեղ» և կընտրի մասնագիտական կրթության համակարգը, այդ հնարավորությունը բոլորի համար անվճար կլինի:

Ի՞նչ աշխատանքներ են արվել վերջին տարիներին նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ մասնագիտական կրթության դերը բարձրացնելու համար:

Վերջին տարիներին կատարված բարեփոխումների շրջանակում մենք շատ լուրջ հաջողություններ ունենք մասնագիտական կրթության ուսուցման համակարգում՝ երիտասարդության ներգրավվածության առումով: Այդ բարեփոխումների արդյունքում կարողացել ենք ոչ ամբողջությամբ, բայց մասամբ վերանորոգել ուսումնական հաստատությունները, վերազինել նորագույն սարքավորումներով և լաբորատորիաներով, հագեցնել արհեստանոցներով, վերամշակել և ամբողջությամբ վերանայել կրթության բովանդակությունը: Մենք նաև նոր հարաբերություններ ենք փորձում ստեղծել գործատուների հետ, քանի որ կրթության որակի բարձրացումը կամ կրթության կազմակերպումը մասնագիտական կրթության համակարգում՝ առանց գործատուի մասնակցության, ուղղակի հնարավոր չէ ապահովել: Մատչելիությունը և ներգրավվածությունը մասնագիտական կրթական համակարգում ապահովելու համար մենք հանել ենք ընդունելության քննությունները, որ հավելյալ դժվարություններ և բարդություններ չստեղծենք ուսանողների համար քոլեջ և ուսումնարան ընդունվելիս: Այժմ նրանք, դպրոցի ավարտական գնահատականների հաշվառմամբ, կարող են, մրցույթին մասնակցելով, ընդունվել քոլեջ կամ ուսումնարան՝ անվճար կամ վճարովի: Մատչելիությունն ու գրավչությունը բարձրացնելու նպատակով կառավարությունը նախորդ տարվանից ավելացրել է անվճար տեղերի թիվը: Ենթադրվում է, որ 2014-ին, երբ անցում կկատարվի 12-ամյա պարտադիր կրթության, սա կներառի նաև մասնագիտական և միջին մասնագիտական կրթության բաժինը, ինչն էլ կենթադրի անվճար կրթության բազայի մեծացում:

Ինչո՞վ է պայմանավորված այն փաստը, որ մասնագիտությունները, որոնք հիմա առավել պահանջված են աշխատաշուկայում՝ ուսանողներին այնքան էլ չեն հետաքրքրում, քան այն մասնագիտությունները, որոնցում կադրերի ավելցուկ ունենք:

Երիտասարդությունն արհեստագործական կրթությանն այնքան էլ հակված չէ, քանի որ այն իրենից պահանջում է ձեռքի աշխատանք, ֆիզիկական ուժի ներդրում, իսկ երիտասարդները հակված են ավելի քիչ աշխատանք, ջանք գործադրելով շատ եկամուտներ ունենալ (ի դեպ, սա միայն Հայաստանին չէ բնորոշ): Դրա պատճառով մի շարք հրաշալի, նաև ավանդական մասնագիտություններ տուժում են: Երիտասարդությունը, այո, չի ձգտում ստանալ այդ մասնագիտությունները, բայց դրանց կարիքն աշխատաշուկայում կա: Այստեղ որոշակիորեն հասարակական գիտակցության փոփոխման անհրաժեշտություն կա, այսինքն՝ հանրությանը պետք է ցույց տալ և համոզել, թե իրականում ի՞նչ առավելություններ ունի արհեստագործական կրթությունը և ի՞նչ է պետք դրանից ակնկալել, այդ մասնագիտությունը ստանալուց հետո ի՞նչ հնարավորություններ կարող են բացվել երիտասարդի առջև՝ աշխատանք գտնելու, իր բարեկեցությունն ապահովելու համար:

«Համաշխարհային հմտություններ» միջազգային մրցույթը Հայաստանի ՄԿՈՒ հաստատությունների աշխատանքի լավագույն հայելին են: Մրցույթի ազգային փուլի ժամանակ ժյուրիի որոշ անդամներ իրենց դժգոհությունն էին հայտնում ուսանողների ոչ լավ պատրաստվածության մասին: Ի՞նչ կասեք այս մասին. ինչ-որ քայլե՞ր է ձեռնարկելու ԿԳՆ-ն ի պատասխան դրա:

Հաշվի է պետք առնել, որ մասնագիտական կրթության համակարգը վերջին տարիներին է սկսել ուշադրության կենտրոնում հայտնվել՝ ինչպես պետության, այնպես էլ հասարակության: Մինչ այդ ունեցել ենք համակարգ, որը գոյատևել է զուտ իներցիայով և իներցիայից հետո բնակաբար ակնկալել, որ շատ կարճ ժամանակում բարձր արդյունքներ կունենանք, ակնկալել, որ համակարգում բոլոր խնդիրները այսքան ժամանակում լուծում ստացած կլինեն, իրատեսական չէ: Աշխատանքի ընթացքում են ի հայտ գալիս բոլոր թերությունները, բացթողումները: Նմանատիպ մրցույթի անցկացումը նույնպես աշխատանքի մի բաղադրիչ է, որի ընթացքում արձանագրված խնդիրները, մասնագետների և գործատուների կողմից արված առաջարկությունները քննարկվում են և դրանց հիման վրա կայացվում ՄԿՈՒ համակարգի զարգացմանը միտված առավել արդյունավետ որոշումներ:

Այս անգամ «Համաշխարհային հմտություններ» միջազգային մրցույթին Հայաստանի մասնակցությանը ֆինանսական և ոչ միայն աջակցություն ցուցաբերեց GIZ-ը: Հաջորդ անգամ ՀՀ կառավարությունը հանձն կառնի՞ հոգալու հայաստանյան պատվիրակության ֆինանսական խնդիրները:

Այս մրցույթում Հայաստանը հանդես է եկել որպես ասոցացված անդամ, որը մեծ ձեռքբերում է մեր երկրի, ինչպես նա ՄԿՈՒ ոլորտի զարգացման համար: Ֆինանսավորման հետ կապված այս պահի դրությամբ կոնկրետ ոչինչ չեմ կարող ասել. դեռ բանակցային փուլում է: Մենք դեռ այս հարցը քննարկում ենք գործատուների հետ: Կոնկրետ պայմանավորվածություններ ունենալու դեպքում անպայման կտեղեկացնենք «World skills»-ով հետաքրքրվողներին:

ARMENIAN E-LEARNING NETWORK

Մարդկային ռեսուրսների կառավարում և առաջնորդների վերապատրաստում ՄԿՈՒ ոլորտում Հարավային Կովկասում

Գերմանական միջազգային համագործակցություն ընկերությունն իրականացնում է «Մարդկային ռեսուրսների կառավարում և առաջնորդների վերապատրաստում ՄԿՈՒ ոլորտում Հարավային Կովկասում» նախագիծ: Այն ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից:

2013թ. օգոստոսին և հոկտեմբերին կազմակերպվեցին ՄԿՈՒ դասավանդողների մասնագիտական վերապատրաստումներ՝ ուղղված ինչպես մարդկային ռեսուրսների զարգացմանը, այնպես էլ կրթական առկա ծրագրերի արդիականացմանը և ուսուցման որակի բարձրացմանը էլեկտրոնային ուսուցման միջոցով:

Էլեկտրոնային ուսուցման ներդրումը, այդ թվում նաև տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը և օգտագործումը ՀՀ ՄԿՈՒ համակարգում հնարավորություն կտա բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը, ամրապնդել սոցիալական համագործակցությունը և ապահովել աշխատաշուկայում մրցակցային առավելությունները:

ՄԿՈՒ դասավանդողների մասնագիտական վերապատրաստման ընթացքում մասնակիցները ձևավորեցին էլեկտրոնային ուսուցման պիլոտային նախագիծ և այն կզարգացնեն հետագայում: Սեմինարի վերջին օրը մասնակիցները ներկայացրեցին իրենց պիլոտային նախագծերը՝ նախապես համաձայնեցնելով իրենց ուսումնական հաստատություններում ղեկավարների հետ և ստանալով նրանց պատրաստակամությունն ու աջակցությունը պիլոտային նախագծի մշակման և իրականացման վերաբերյալ: Վերապատրաստումները վարում են GIZ-ի կողմից հավաստագրված էլ. ուսուցման ազգային ցանցի փորձագետները, ովքեր մասնակիցներին ներկայացրեցին էլեկտրոնային ուսուցման կառավարման, ուսումնամեթոդական ձևավորման, բովանդակության մշակման և առցանց դասավանդման վերաբերյալ թեմաները:

Նոյեմբերի վերջին GIZ-ի կողմից կազմակերպվեց «Էլեկտրոնային ուսուցում և մասնագիտական կրթություն» թեմայով ավարտական աշխատաժողով, որի ժամանակ ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները, ամփոփեցին պիլոտային նախագծերը, քննարկվեց նաև էլեկտրոնային ուսուցման ազգային ցանցի փորձագետների հետագա համագործակցության ձևաչափը, հնարավոր ռիսկերը և ակնկալվող աջակցությունը ծրագրի շրջանակներում:

Էլեկտրոնային ուսուցման ներդրումը, այդ թվում տեղեկատվական-կոմունիկացիոն տեխնոլոգիաների կիրառումը և օգտագործումը ՀՀ ՄԿՈՒ համակարգում, հնարավորություն կտա բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը, ամրապնդել սոցիալական համագործակցությունը և ապահովել աշխատաշուկայում մրցակցային առավելություններ՝ նպաստելով ՄԿՈՒ հաստատությունների հեղինակության և վարկանիշի բարձրացմանը: ՄԿՈՒ-ում ուսուցման նոր և արդյունավետ մեխանիզմների ներդրումն ու շարունակական զարգացումը կնպաստեն ուսուցման ճկուն համակարգի ձևավորմանը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ աշխատաշուկայի կողմից պահանջվող կարողություններին և հմտություններին միտված ուսուցման իրականացման և արդյունավետ գնահատման համար:

«Մասնագիտական կրթություն և ղեկավարների վերապատրաստում Հարավային Կովկասում» 2013-2014թթ. նախագծի հիմնական նպատակն է աջակցել ՄԿՈՒ ոլորտի ղեկավարներին և մասնագետներին զարգացնելու իրենց կարողություններն արդի պահանջներին համապատասխան հետևյալ ուղղություններով՝

- մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարում,
- մասնագիտական մանկավարժություն և արդյունավետ հաղորդակցման ունակություն,
- մասնագիտական կողմնորոշման միջոցառումների իրականացում,
- տնտեսության ոլորտների հետ համագործակցություն և կապերի ամրապնդում,
- մասնագիտական կրթության վարկանիշի բարձրացման միջոցառումների իրականացում,

• ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնում և կիրառում:

Նախագծի իրականացման եղանակներն են.

• Ուսուցումը տեղում՝ հրավիրված փորձագետների կողմից վերապատրաստումների և երկխոսությունների միջոցով,

• գիտամեթոդական սեմինարների, կլոր սեղանների և աշխատաժողովների կազմակերպում,

• գործուղումներ Գերմանիա՝ պրակտիկայի անցկացմամբ, որն ավարտվում է հաշվետվության ներկայացմամբ,

• հավաստագրի շնորհում:

Նախագծի իրականացման նախադրյալներն են.

• Հարավ-Կովկասյան հանրապետություններում վերջին տարիներին նկատվող տնտեսական զարգացման առաջընթացը, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկի աճի միտումները,

• այդ հանրապետությունների մասնագիտական կրթության ոլորտում սկսված և իրականացվող նորամուծությունները, կապված աշխատանքի շուկայի պահանջարկի արդիականացմամբ,

• ոլորտի ղեկավարների և մասնագետների վերապատրաստման անհրաժեշտությունը,

• պատրաստված մասնագետների մրցունակության ապահովումն աշխատանքի ներքին և արտաքին շուկաներում,

• տարածաշրջանում որակյալ մասնագետների պատրաստում:

Մյուս կողմից, նախագծի հայեցակարգի մշակման ընթացքում հաշվի են առնվել 2009-2012թթ. «Դեպի զբաղվածությունը կողմնորոշված (միտված) որակավորումը Հայաստանի տնտեսական զարգացման առանցքային ոլորտներում» իրականացված նախագծի արդյունքները և «ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի» մասնագիտական կրթության բաժնում նախատեսված հետևյալ միջոցառումները.

• ինտեգրում միասնական եվրոպական կրթական տարածքին,

• ուսուցման որակի համապատասխանեցում եվրոպական պահանջներին,

• համակարգի արդյունավետության ապահովում,

• մասնագիտական կողմնորոշման համակարգի ստեղծում,

• սոցիալական գործընկերության և երկխոսության խթանում,

• մասնագետների պահանջարկի ձևավորման համակարգի ներդնում,

• հաստատությունների գործունեության հաշվետվության թափանցիկություն և այլն:

Վերոնշյալն առավել կարևոր է դարձնում GIZ ընկերության կողմից առաջադրվող միջոցառումների իրականացումը նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում:

Հարցազրույց «Հայաստանում Մարդկային ռեսուրսների զարգացում և առաջնորդների վերապատրաստում ՄԿՈՒ ոլորտում Հարավային Կովկասում» նախագծի համակարգող Յուլյա Ստակյանի հետ

Ո՞ր մակարդակում է այժմ գտնվում էլեկտրոնային ուսուցման գործընթացը:

Էլեկտրոնային ուսուցումն իրականացվում է դեռևս 2009թ., որին իրենց մասնակցություն էին հայտնել տարբեր կառույցներ՝ ուսումնական հաստատություններ, հասարակական կազմակերպություններ և այլն:

Սկսել ենք ութ կազմակերպությունով, որոնք որոշեցին ստեղծել էլեկտրոնային ուսուցման ասոցացիա: Ավելի քան մեկ տարի տեղի ունեցան քննարկումներ, թե ինչպես պետք է գործի այդ ասոցացիան: Կարծիքները տարբեր էին. ուսուցումը պետք է արվի անհատական, թե կազմակերպությունների մակարդակով և այլ նմանատիպ հարցեր:

Բոլոր քննարկումներից հետո որոշվեց, որ էլեկտրոնային ուսուցումը պետք է լինի փորձագետների ցանց, որը բաց է այլ մասնագետների համար: Ցանկացած կազմակերպություն կամ անհատ, ով ուզում է զարգացնել իր հմտությունները, կարող է ներառվել այդ ցանցում:

Ինչպե՞ս որոշվեց կանգ առնել ՄԿՈՒ ոլորտի վրա:

Երկար ուսումնասիրություններից հետո եկանք այն եզրակացության, որ հեռավար կրթության թիրախ խումբ կարող են լինել ՄԿՈՒ հաստատությունները, քանի որ քոլեջներն ու ուսումնարանները, բացի ֆորմալ ուսուցում տրամադրելը, ապահովում են կապը գործատուների հետ, կազմակերպում են կարճաժամկետ դասընթացներ և այլն: Այդ ամենը հաշվի առնելով՝ եզրակացրինք, որ պետք է ՄԿՈՒ ոլորտի ներդրումների մեկն էլ լինի «Նորարարական տեխնոլոգիաների, ուղղությամբ:

Այս տարի ծրագրի շրջանակներում ընդգրկված են ՀՀ ՄԿՈՒ համակարգի հետևյալ ուսումնական հաստատությունները՝

- Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ
- Մեղրիի պետական քոլեջ
- Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ
- Գյումրու պետական տեխնիկական քոլեջ
- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան
- Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ
- Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ
- Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ:

Մեր նպատակն է ստեղծել սկզբնական շրջանում այդ ութ ՈՒՀ-ների միջև ցանց, որը ավելի կհեշտացնի նրանց աշխատանքն այս ոլորտում: Նրանցից յուրաքանչյուրն ընտրել է տարբեր մաս նագիտություններ, որոնց համար էլ պատրաստվում են հեռավար ուսուցման ծրագրերը:

Ինչպիսի՞ խնդիրներ են ծագել ծրագրի իրականացման ընթացքում:

Տարվա ընթացքում կազմակերպված հանդիպումների և վերապատրաստումների արդյունքում այս ուսումնական հաստատություններում գործող պատասխանատու թիմերը պետք է ունենան հեռավար ուսուցման վերջնական պատրաստի արտադրանք:

Այդ շփումները հանգեցրին այն եզրակացության, որ ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչները լուրջ խնդիրներ ունեն նորարարական տեխնոլոգիաների հետ, ինչը ևս խոչընդոտ էր ծրագրի առաջընթացին: Առաջին հանդիպման ժամանակ նրանք սովորեցին բազային ինֆորմացիան, որի շնորհիվ հետագայում սկսվեց հեռավար ուսուցման առանձնահատկություններին ծանոթանալու փուլը:

Բարդություններ եղան, քանի որ վերապատրաստման առաջին փուլից հետո շատերը հրաժարվեցին մասնակցելուց՝ նշելով, որ իրենք ոչ ճիշտ մարդկանց են ընտրել այդ գործի համար:

Ինչպե՞ս է վերաբերվում այս գործընթացին կրթության և գիտության նախարարությունը:

Իրականում օրենքը չի արգելում դասավանդել հեռավար ձևով, սակայն ինչպես իրականացնել դա՝ սկսած արտոնագրումից մինչև ուսուցման ժամանակահատվածը, հենց սա է խնդիրը:

Այս պահին նախաձեռնությունը գալիս է ներքևից, և դա է հենց առողջ առաջընթացը: Հեռավար ուսուցումն այժմ այնքան նոր ոլորտ է, որ նույնիսկ տերմինների հետ խնդիր կա: Եվ մեր մասնագետներն այժմ պատրաստում են տերմինների բառարան, որը կներկայացվի ԿԳՆ՝ հետագայում հեռավար կրթության զարգացումն ավելի արագացնելու համար:

Այս գործում ՄԿՈՒԶԱԿ-ի դերակատարումը շատ մեծ է, քանի որ GIZ-ը միայն սկզբնական ժամանակահատվածում է աջակցում նորարար ծրագրերին: Հետագայում այս ծրագրով զբաղվելու ՄԿՈՒԶԱԿ-ը, որը պետք է պատրաստի իրեն հարմար ձևաչափը:

Ինչպիսի՞ այլ ծրագրեր կան ՄԿՈՒ զարգացման կենտրոնի հետ համատեղ:

GIZ-ը ՄԿՈՒ դասավանդողների վերապատրաստումների չափորոշիչի գրումը: Դա արվում է ՄԿՈՒՀԱԿ-ի համար: Մենք այստեղ դիտարկելու ենք այն ուսուցիչներին, որոնք նոր են մուտք անում որպեսզ դասավանդող, անհրաժեշտ ինչ գիտելիքներ պետք է նա ունենա: Ինչպես նաև լինելու կարիերայի զարգացումը, ոչ միայն ուղղահայաց ձևով, այլ նաև մասնագիտական հմտությունների ձևով:

Այս ծրագրերը GIZ-ն իրականացնում է ամբողջ Հարավային Կովկասում: Ինչպիսի՞ն են զարգացումները այս ուղղությամբ:

Պարտադիր պայման է GIZ-ի ծրագրերի համար կազմակերպել տարածաշրջանի մակարդակով: Պետք է նշել, որ Հայաստանն հեռավար կրթության ծրագրում առաջին տեղում է իր ակտիվությամբ: Տարվա վերջում հանդիպում ենք կազմակերպելու երեք երկրների ԿԳՆ ներկայացուցիչների հետ: Հանդիպման օրակարգի հիմնական նպատակն է ընդհանուր տա_ածաշրջանի զարգացման խնդիրները: Այդ ամենը դեռ քննարկման փուլում է: Հարկավոր է հաշվի առնել տարբեր խնդիրներ: Պետք է նշել, որ հեռավար կրթության քննարկումներն անցել են բավականին առողջ մթնոլորտում, պետք է հուսալ, որ նույնը կլինի նաև այս դեպքում:







«ՄԵՆՔ ՎԵՐՋԻՆԸ ՉԵՆՔ ԵՂԵԼ, ԴԱ ԱՐԴԵՆ ԼԱՎ ԱՐԴՅՈՒՆՔ Է»

«Համաշխարհային հմտություններ» մրցույթն իրականացվում է երկու տարին մեկ՝ իր շուրջ հավաքելով ամբողջ աշխարհի երիտասարդ մասնագետներին: 2013թ. մրցույթին մասնակցեց նաև Հայաստանը՝ ՄԿՈՒԶԱԿ-ի գլխավորությամբ: Հայաստանի պատվիրակությունը ստեղծվել է ԿԳ նախարարության և գործատուների համագործակցության արդյունքում: Գործատուների կողմից պատվիրակության անդամը առևտրաարդյունաբերական պալատի գործարար ուսումնական ծրագրերի ղեկավար Վահագն Հովհաննիսյանն է:

«Մասնագիտական կրթություն և ուսուցում» հանդեսը հարցազրույց է վերցրել Վահագն Հովհաննիսյանից:

Սոցիալական գործընկերությունն ինչպե՞ս է աջակցում գործընթացին:

Օգնում է, բայց պետք է ավելի շահագրգռվի: Պետք է փորձենք պահպանել այսօրվա ունեցածը, որպեսզի սոցիալական գործընկերության անդամները, որոնք հնարավորություն ունեն ֆինանսավորել այս ամենը, կարողանան տեսնել, թե ինչ է իրենից ներկայացնում «Համաշխարհային հմտություններ» մրցույթը: Պետք է որոշել, թե ինչպիսի

կազմակերպություն կստեղծվի, գուցե հիմնադրամ կամ հկ:

Նոր մասնագիտություններ կավելանա՞ն հաջորդ մրցույթին:

Մենք ցանկանում ենք պահպանել այս երեք ոլորտը՝ ոսկերչություն, խոհարարություն, հագուստի դիզայն, քանի որ արդեն փորձ ունենք այս ոլորտներում և կարող ենք ավելի մեծ հաջողությունների հասնել մյուս անգամ: Ինչու չէ, նաև այս ոլորտներն արժի զարգացնել Հայաստանում: Մեկ այլ ոլորտ՝ IT-ն, մենք ևս ցանկանում ենք ներգրավել ցանկում, քանի որ այնքան էլ ծախսատար չէ պատրաստման փուլում: Հայաստանը այս ոլորտում ներուժ ունի:

Ինչպիսի՞ն է գործատուների հետաքրքրվածությունն այժմ:

Բացի այս երեք ոլորտի գործարար ներկայացուցիչներից՝ հետաքրքրվողների թիվը մեծ չէ: Թեև կարևորն այն է, որ գոնե այս երեքը տեղյակ են և հետաքրքրված: Այս անգամ նրանք իրենց ներդրումն արել են պատրաստման մակարդակով:

«Համաշխարհային հմտություններ» մրցույթին ինչպե՞ս ելույթ ունեցավ Հայաստանը:

Մենք վերջինը չենք եղել, դա արդեն լավ արդյունք է նման միջազգային մրցույթում: «Համաշխարհային հմտություններ» մրցույթը շատ լավ հարթակ է, որտեղ դիտարկում են տվյալ պետության զարգացվածությունը և հմտությունները տվյալ մասնագի-տությունների գծով: Այնտեղ մենք ցույց տվեցինք մեր հմտությունները, մեր խոհարար-փորձագետը նույնիսկ դարձավ մրցույթի փորձագետների գլխավորը, ինչը խոսում է մեր հմտությունների բարձր մակարդակի մասին:

Ինչպե՞ս են ընթանում նախապատրաստական աշխատանքները հաջորդ մրցույթին մասնակցելու համար:

Մենք ունենք երկու տարի, սակայն դա կարճ ժամանակահատված է: Մենք պետք է պատրաստվենք հենց այս օրվանից: Դրահամար նախ պետք է գտնենք ֆինանսական միջոցներ, քանի որ GIZ-ն այլևս չի հովանավորելու այս մրցույթում Հայաստանի մասնակցությունը: Մենք պետք է հստակեցնենք, թե ինչպես կարող են մեզ օգտակար լինել գործարարները, պետությունը: Պետք է նշել, որ մենք ունեցել ենք նախատիպ. մի քանի տարի առաջ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվեց «Ես կարող եմ աշխատել» հմտությունների ցուցահանդես-մրցույթը, որը այս ամենի սկիզբն էր: Եվ ինչպես անցած տարի, այս տարի ևս տեղի ունեցավ «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթը: Ազգային մրցույթ տեղի կունենա նաև մյուս տարի: Այդ մրցույթների հաղթողներից էլ մենք կընտրենք 2015թ. «Համաշխարհային հմտություններ» մրցույթի մասնակիցներին:

Միայն առաջին անգամ է GIZ-ը հովանավորում երկրներին՝ մասնակցելու նման միջոառման, ինչպե՞ս ենք շարունակելու շարժվել առաջ՝ առանց նրա հովանավորության:

«Համաշխարհային հմտություններ» մրցույթին տարբեր երկրներում տարբեր կերպ են մասնակցում: Օրինակ Գերմանիայում հենց գործատուների շնորհիվ են երեխաները մասնակցում մրցույթին: Ռուսաստանում կառավորությունն է հովանավորում:

Հայաստանում «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթը հովանավորվում է պետության կողմից: Սակայն միջազգային ասպարեզ դուրս գալու համար անհրաժեշտ էր GIZ-ի օգնությունը: Մյուս անգամ եթե նշված երեք մասնագիտությունները պետությունը հովանավորի, մենք կփորձենք աստիճանաբար գործատուներին ներգրավել: Հուսով եմ՝ չի մնա միայն պետության հովանավորությամբ: Խոշոր բիզնեսն ունի այդ հնարավորությունը, սակայն դեռ տեղյակ չէ: Այնպես որ մենք կարիք ունենք լոբբինգի: Ես խոսել եմ շինարարության ոլորտի ներկայացուցիչների հետ, հետաքրքրություն կար:

Եթե գա 2015թ., և մենք չկարողանանք գտնել հովանավորներ, ինչ ենք անելու:

Եթե մենք չմասնակցենք, շատ վատ կլինի: Դա նույնն է, ինչ մարզիկի համար օլիմպիադան: Այսօր մենք ձևավորում ենք հմտությունների գծով օլիմպիական թիմ: Մեկ մասնակցի համար անհրաժեշտ է 5-10 հազար եվրո՝ կախված անհրաժեշտ պարագաներից:

Ուրիշ ի՞նչ ասպարեզում եք տեսնում գործատուների և ՄԿՈՒԶԱԿ-ի համագործակցությունը:

Վերջին տարիներին այդ համագործակցությունը թռիչք է ապրել: Գործատուների և ՄԿՈՒԶԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մենք փակել ենք բոլոր ոլորտները: Հայկական փորձը միջազգային ասպարեզում կիրառվելու է որպես փորձ՝ այլ երկրներում այս համակարգը ներդնելու համար: Մենք շատ կարճ ժամանակում հասել ենք որոշակի մակարդակի, որը շատ գովելի է: Գորատուների հետ համագործակցությունը կրթական հաստատություններում մոտ տարբեր կարծիքներ է ստեղծել: Գործատուներն աշխատում են ուսումնական հաստատությունների ընդամենը 10 տոկոսի հետ: Կան հաստատություններ, որոնք պնդում են՝ համագործակցություն չի ստացվում, հաստատություններ էլ կան, որ ասում են՝ շատ լավ է: Պետք է պատճառը փնտրել ներսում:

ԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Որքան էլ այսօր խոսվում է արհեստների տարածման և դրանց տեսակների պահպանման մասին, այդուհանդերձ, այս դաշտը գործնականում մնում է ուշադրությունից դուրս: Այդ մասին է վկայում ներկայումս մեծ պահանջարկ ունեցող մի շարք արհեստներին տիրապետող անձանց ակնհայտ պակասը: «Հայ արհեստավորների միություն» հկ-ն շատ է կարևորում համագործակցությունը տարբեր կազմակերպությունների և կառույցների հետ: Կազմակերպության գլխավոր նպատակներից մեկն է սերմանել երիտասարդության մեջ սերը դեպի տարատեսակ արհեստները և, ինչու ոչ, դրանց արժևորումը որպես գոյատևման միջոց:

Բոլոր շահագրգիռ կառույցները պետք է գործեն միասնական՝ մշակելով համապատասխան ռազմավարություն, ծրագիր, որը կապահովի հասարակության առավել լայն շերտերի ընդգրկումը, անկախ տարիքային խմբերից, կարժևորի արհեստներին տիրապետելու գաղափարն ու ձգտումը: Սերը դեպի արհեստները պետք է սերմանել դեռ վաղ հասակից, երբ երեխան ձեռքն է վերցնում որպես խաղալիք մի շարք կենցաղային իրեր և գործիքներ, խոհանոցում օգտագործվող իրեր, կար ու ձևի պարագաներ, գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային տեխնիկայի պարագաներ և այլն: Անչափ կարևոր է մանկապարտեզ-դպրոց-միջին մասնագիտական կառույցներ համագործակցությունը: Համատեղ պետք է մշակել արհեստների ուսուցման և զարգացման ծրագրերը՝ տալով դրանց շարունակական բնույթ: Գործնականորեն պետք է ներգրավել նախադպրոցական տարիքի երեխաներին, հետագայում նաև դպրոցականներին և ուսանողությանը՝ մասնակցելու տարբեր տիպի միջոցառումների, ցուցահանդեսների, մրցույթների և կարճատև դասընթացների, ակտիվացնելու և կարևորելու նրանց անհատական դերը արհեստների տարբեր ոլորտներում: Երբ արհեստը վերածվում է խաղի, այն դառնում է զվարճալի ու հետաքրքիր,

երբ դիտվում է որպես նախասիրություն կամ տիրապետելու ցանկություն, վերածվում է իսկական գլուխգործոցի, իսկ երբ դիտվում է որպես մասնագիտություն, դառնում է ապրուստը վաստակելու և գոյատևելու միջոց: Բազմաթիվ գործնական շրջայցերի ընթացքում ուսումնասիրելով մի շարք երկրների արհեստների զարգացման փորձն ու մեթոդները՝ առավել գրավիչ է թվում Գերմանիայի Դաշնության մոդելը, որի կիրառումը հանգեցրել է նրան, որ ընտանիքների մեծ մասը ողջունում է երեխայի միջին մասնագիտական կրթությունը, հետո նոր ցանկության դեպքում՝ բարձրագույնը: Առավել քան համոզված եմ, որ իրականում եթե ճիշտ և նպատակային կազմվի արհեստների զարգացման ազգային ծրագիրը, ապա մեր երկրում, որի քաղաքացիներից գրեթե յուրաքանչյուրի երակների մեջ հոսում է նախկին համքարների արյունն ու ոգին, այն անպայման կդառնա կիրառելի և կծառայի իր գերագույն նպատակին՝ ավանդական արհեստների պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը:



Հարցազրույց «Հայ արհեստավորների միություն» հկ նախագահ Նարինե Դանիելյանի հետ

Ո՞րն է «Հայ արհեստավորների միություն» հասարակական կազմակերպության հիմնական նպատակը:

«Հայ արհեստավորների միությունը» կամավոր հասարակական կազմակերպություն է: Կազմակերպության հիմնական նպատակներն են օժանդակել արհեստների զարգացումը Հայաստանում, նպաստել հայ արհեստավորների գործունեության ճանաչմանը միջազգային ասպարեզում և գործնական կապեր հաստատել Հայաստանից դուրս գործող նույնանման կազմակերպությունների հետ:

Այսօր մեր նպատակն է օգնել արհեստավորներին կայանալ միջազգային ասպարեզում, ծանոթացնել նրանց արտերկրի իրենց գործընկերների հետ, փորձի փոխանակում կատարել և էլ ավելի կատարելագործվել:

Ի՞նչ խնդիրների առաջ է կանգնած այսօր կազմակերպությունը:

«Հայ արհեստավորների միություն» հասարակական կազմակերպության անդամներից յուրաքանչյուրն էլ ունի իր առօրյա, կենսական խնդիրները: Եվ այդ խնդիրները հիմնականում հաղթահարում են հենց իրենք, իրենց սեփական ուժերով: Արհեստավորները ներկայացնում են այն խավը, որը հույսը դնում է միայն ինքն իր վրա և արդար քրտինքով վաստակում է իր հացն հա նապազօրյա: Զուր չէ, որ ժողովրդական

խոսքն ասում է՝ արհեստավորը սոված է մնում մինչև կեսօր: Որքան էլ զավեշտական թվան այս խոսքերը, այնուամենայնիվ, դրանք իզուր չեն ասված: Իրոք, եթե մարդ լավ արհեստավոր է, ուրեմն անպայման կգոյատևի:

Ինչպիսի՞ բացահայտումներ են եղել նոր վարպետների շրջանակում:

Կազմակերպությունը, անցնելով իր տասնամյա ճանապարհը, մինչև այժմ էլ աշխատում է ի հայտ բերել նոր վարպետների, որոնցից շատ-շատերը դեռևս ծանոթ չեն հասարակությանը: Որքան էլ վառ լինի մեր երևակայությունը, միևնույն է չենք դադարում զարմանալ ու հիանալ ամեն մի նորահայտ արհեստավորի ստեղծագործական մտքի անծայրածիր հորիզոնով ու երևակայությամբ: Եվ պետք է պատկերացնել, թե ինչեր կկարողանա իրագործել արհեստավորը, երբ նա իր թիկունքում կունենա հզոր ֆինանսական աջակցություն: Այո, հզոր, քանի որ խոսքը ոչ միայն կենսական հարցերը հոգալու, այլև ստեղծագործելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մասին է:

Վերնիսաժն ինչպիսի՞ ազդեցություն է ունենում հայ արհեստավորների առաջըն-թացի համար: Արդյոք այն հնարավորություն չէ նոր վարպետների համար:

Բոլորս ենք սիրում մեր «վերնիսաժը», զբոսաշրջիկների համար հետաքրքիր ու սիրելի վայրը, ուր ազգային կոլորիտը համեմվում է տարբեր ժամանակների ու տարածաշրջանների ազգային արհեստների ու արվեստների բարձր ու ցածր մակարդակի գործերով: Իհարկե, հաճելի է...

Բայց եկեք դիտենք մի այլ տեսանկյունից, ավելի ճիշտ այնտեղ կանգնած արհեստավորի աչքերով: Հաճելի է, երբ տաք է ու գործերդ էլ համարյա ավարտած ես լինում, գալիս ես ու սպասում բախտի քմահաճույքին... այո, թող զավեշտական չթվան այս խոսքերը, որովհետև որքան էլ որ հաճելի լինի կանգնելը և ժամանակ առ ժամանակ ծանոթ-անծանոթների հետ զրուցելը, նա սպասում է իր արժանի գնորդին: Իսկ երբ գնորդն էլ լինում է առավել խստանկատ և պահանջկոտ, էլ չենք ասում նաև «առևտրականի» հոգեբանությամբ զինված, ապա հենց այդ ժամանակ էլ դու ստիպված ես լինում հիշել բոլոր քո իմացած և չիմացած փիլիսոփաների, հոգեբանների և մանկավարժների, թեկուզ և կցկտուր խորհուրդներն ու աֆորիզմներները... միայն թե տանուլ չտաս և ապացուցես դիմացինիդ, որ գնահատականը արժանի է քո չարքաշ աշխատանքին:

Ինչո՞վ է նպաստում Ձեր կազմակերպությունը արհեստավորներին:

Որպես կազմակերպության նախագահ՝ չեմ կարող շնորհակալ չլինել բոլոր այն արհեստավորներին և մարդկանց, որոնք հավատացին մեզ և մեզ հետ առաջին քայլերն արեցին մեր կայանալու ճանապարհին:

Լավ ծանոթ լինելով նրանց հետ՝ ես ժամանակ առ ժամանակ զարմանում եմ նրանց ինքնատիրապետման կարողության վրա: Երբևիցե չեն ձանձրացրել իրենց նյութական պրոբլեմներով: Վերջերս մտերմիկ զրույցի ընթացքում պարզվեց միայն, որ մի շատ գեղեցիկ ստեղծագործող կին ամեն ուշ գիշեր վերածում է իր փոքրիկ խոհանոցը արվեստանոցի և միայն այդ ժամանակ է նա կարողանում

ստեղծագործել, իսկ մեկ ուրիշը իր ննջարանն է վերածել կարի արհեստանոցի, երրորդը՝ իր բնակարանը ցուցասրահի՝ ոչ թե էսթետիկական հաճույք ստանալու համար, այլ պարզապես որ իրերն իրենց իրական տեղը զբաղեցնեն:

Այսօր կազմակերպությունն ունի հղկված ծրագիր՝ իր անդամների աշխատանքային պայմանները բարելավելու վերաբերյալ: Այն բավականին ընդարձակ և աշխատատար է և, իհարկե, կարիք ունի ֆինանսական մեծ աջակցության: Եվ ես առավել քան համոզված եմ, որ այն գործարարը կամ ֆինանսապես հզոր կազմակերպությունը, որը նեցուկ կկանգնի այս ծրագրին, անպայման առիթ կունենա հպարտանալու և վայելելու իր ներդրումների պտուղները:

Մեր գլխավոր նպատակն է «Արհեստների դարբնոց»ուսումնական կենտրոնի ստեղծումը: Կենտրոնի հիմնական նպատակն է լինելու ուսուցանել մեր երեխաներին գրեթե մոռացված արհեստները՝ երաժշտական գործիքների պատրաստում, տիկնիկագործություն, մարաշ և այլն:

Հայաստանի արհեստավորների հիմնական խնդիրը ո՞րն է:

Վարպետներից յուրաքանչյուրն էլ ունի գրեթե նույն պրոբլեմը՝ իրացնել իրենց արտադրանքը որքան հնարավոր է շահավետ կերպով: Ինչո՞ւ, որովհետև ծախսի խնդիր կա: Անգամ ուսուցումը պահանջում է մեծ ծախսեր, օրինակ հումքի, տարածքի անհրաժեշտ չափի ապահովում: Իսկ արտադրանքի իրացումը շահավետ կերպով առավել իրական է թվում հանրապետությունից դուրս՝ հեռու արտասահմանում, որովհետև այսօր մեր ժողովրդի գնողունակությունն այդքան էլ բարձր չէ, և առայժմ արհեստավորի համար ցանկալի գնորդները մնում են օտարերկրացիներն ու այցելուները:

Արտասահմանի փորձն ինչպե՞ս կարող ենք կիրառել մեզ մոտ:

Ուսումնասիրելով արտերկրների համանման կազմակերպությունների աշխատանքային փորձն ու ձեռք բերված հաջողությունները՝ միանշանակ կարող եմ ասել, որ առանց կողմնակի աջակցության հնարավոր չէր հասնել նրան, ինչին հասել են մեր գործընկերները, որոնց հովանավորել է որևիցե հայտնի գործարար, մեկ ուրիշն այն ստացել է ինչ-որ ֆոնդի կողմից, երրորդը՝ ինչ-որ շահագրգիռ կողմից, չորրորդը՝ հենց պետության կողմից:

Մենք ունենք շատ շնորհաշատ արհեստավորներ, որոնք տիրապետում են ոչ թե մեկ, այլ մի քանի արհեստների: Այսօր նրանց ուժերը թերագնահատել, կնշանակի նրանց արժեզրկել: Վերցնենք, օրինակ, մեր ֆրանսիացի գործընկերների փորձը. բոլորս գիտենք ֆրանսիական boutique-ները իրենց հայտնի յուրահատկություններով և ուրույն ոճերով: Նրանք սերտ համագործակցում են տնայնագործների հետ: Ինչո՞ւ: Որովհետև աշխատողի վրա նրանք ծախս չեն կատարում, այլ վճարելով մի որոշակի «X» գումար, ստանում են պատրաստի արտադրանք և դեռ որակական խնդիր էլ չեն ունենում, քանի որ այստեղ ամեն մարդ հենց ինքն է անձամբ պատասխանատու իր աշխատանքի որակի համար: Իսկ եթե փորձենք համեմատության մեջ դնել աշխատանքի դիմաց

վարձատրության գումարի չափը այդ նույն boutique-ում վաճառվածի հետ, ապա գումարի զգալի տարբերություն կնկատվի:

Ինչպե՞ս են վերաբերվում տեղական արհեստավորներին մեր գործարարները:

Այսօր Հայաստանում կան գործարարներ, որոնք աշխատում են վերը նշված սկզբունքներով: Եվ դա, իրոք, ողջունելի է, քանի որ դա էլ մարդուն աշխատանքով ապահովելու մի ձև է: Ուզում եմ գրավել այն գործարարների ուշադրությունը, որոնք դեռ չեն կողմնորոշվում կամ էլ պարզապես դադարել են իզուր ներդրումներ կատարել՝ չունենալով ինքնաարդարացման և պատասխանատվության և ոչ մի երաշխիք: Այսօր Հայաստանում իրոք կա ստեղծագործողների մեծ պոտենցիալ, խոսքս հենց մեր արհեստավորների մասին է, դա մի մեծ բանակ է: Նրանք, արհեստները ձուլելով արվեստի ճյուղերի հետ, ստեղծում են գեղարվեստի նմուշներ: Այդ են ապացուցում խեցեգործները, փայտագործները, դերձակները, մետաղագործները, ակնագործները, քարտաշները, գորգագործները և շատ ու շատ ուրիշներ:

Որո՞նք են հայկական հին արհեստները, որոնք կարելի է զարգացնել:

Խեցեգործությունը արհեստի հին ճյուղերից մեկն է եղել Հայաստանում: Երբ սովորական, պարզ կավե ամանը զարդարում ես գունային երանգներով կամ պարզապես որևիցե պատկերով, այն վերածվում է արվեստի գործի, իսկ սովորական փայտը մշակվելով կարող է դառնալ բնականից քիչ տարբերվող ծաղիկ, դերձակները սովորական կտորների գունային խաղերից կարող են ստեղծել զգեստների հավաքածու՝ խառնելով ազգային տարազներին հատուկ զարդանախշերը ժամանակակից գունային երանգների հետ, տալով նրանց ժամանակակից հագուստի ձև ու նաև երեկոյան զգեստներ ստեղծել: Կարծում եմ, որ մետաղագործների մասին խոսելն անգամ ավելորդ է. բոլորս գիտենք, թե ինչերի են ընդունակ մեր արծաթագործներն ու ոսկերիչները, իսկ ակնագործների նուրբ ու բարդ աշխատանքները միմիայն լրացնում են նրանց յուրահատուկ ձուլվածքները: Խոսելով գորգագործների և կարպետագործների մասին՝ պետք է գնահատել նաև նրանց ազգայինին հավատարիմ մնալու կարողությունը: Երբեք չեն շփոթում կամ էլ խառնում ազգային նախշերն ու գույներն այլընտրանքի հետ:

Նույնիսկ դրանք տեղադրում են ազգային տիկնիկների՝ նուրիների հագուստի վրա:

Իսկ ինչ կասեք, երբ տեսնեք, թե մարդ արարածը քարից, այն էլ տուֆ քարից, ինչպես է արարել քարե ծաղիկ: Պետք էր ականատեսը լինել այն պատմության, երբ մեզանից մոտ մեկ ժամ պահանջվեց, որպեսզի մեր ամերիկացի հյուրին կարողանանք ապացուցել, որ այն պատրաստված է ոչ թե ժամանակակից տեխնիկայի միջոցով, (ինչպես ինքն էր պնդում՝ համակարգչով), այլ պարզապես ձեռքերով: Ինչպես կարող ես անտարբեր մնալ կնոջ մատներով հյուսած մաքրամեի այն աշխատանքի հանդեպ, որի վրա նա աշխատել է ուղիղ երկու տարի, այն էլ մութ ու ցուրտ տարի՝ արդյունքում կերտելով Գոշավանքի խաչքարը:

Խոսելով այս ամենի մասին՝ կցանկանային գրավել բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր պատրաստ են աջակցել կամ թեկուզ համագործակցել կազմակերպության հետ՝ արարող մարդկանց բացահայտելու և դրսում նրանց ներկայացնելու հարցում: Ունենք մի շարք բանավոր հրավերներ Արաբական էմիրություններում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում ցուցահանդես ներկայացնելու, սակայն ինչպես և հիմնականում է լինում, կազմակերպությունը դեռ չունի ամուր ֆինանսական հիմքեր այդ հրավերներն ընդունելու համար: Կարծում եմ, որ դեռ ամեն ինչ առջևում է: Հույսներս դնենք առաջին հերթին ինքներս մեզ վրա, ինչպես դա անում են մեր արհեստավորները:

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

Տարածքը՝ 1242 կմ2 (ՀՀ տարածքի 4.2%):
Բնակչությունը՝ շուրջ 312 հազար մարդ:
Բնակչության խտությունը՝ 251 մարդ/կմ2:
Համայնքների թիվը՝ 97, որոնցից քաղաքային՝ 3, գյուղական՝ 94:
Մարզն ունի 3 քաղաքային համայնք՝ Արմավիր, Վաղարշապատ և Մեծամոր:

Արմավիրի մարզը հարուստ է պատմական բացառիկ հուշարձաններով: Եզակի հուշարձան է Մեծամորի բլրի լանջին պեղված հինգհազարամյա հնության (բրոնզեդարյան) մետաղաձուլարանը:

Պատմական մեծ արժեք են ներկայացնում ուրարտական քաղաք Արգիշտիխինիլիի ավերակները: Դրանց հարևանությամբ՝ Արաքս գետի նախկին հունի ձախ ափին, գտնվել է հայոց նախկին մայրաքաղաքը՝ Արմավիրը, որը դարեր շարունակ եղել է տնտեսական և մշակութային խոշոր կենտրոն ու մնացել է այդպիսին մինչև նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի հիմնադրումը: Պատմաճարտարապետական մեծագույն արժեք է ներկայացնում նաև Սարդարապատի հուշահամալիրը:

Արմավիրի մարզը բնակչության բացարձակ թվով հանրապետությունում գրավում է միջին տեղ, բայց առաջինն է բնակչության խտության ցուցանիշով: Բնակչության ավանդական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Այստեղ է գտնվում ամենայն հայոց կաթողիկոսության ու հայոց կաթողիկոսի աթոռանիստը: Մայր տաճարին կից գործում է հոգևոր ճեմարան, որը հայ առաքելական եկեղեցու ծառայողներ է պատրաստում Հայաստանի և Սփյուռքի համար:

Երկրի էկոնոմիկայում Արմավիրի մարզի տեղը և դերը որոշող գլխավոր ճյուղը էլեկտրաէներգետիկան է՝ հանձին Հայաստանում և ամբողջ տարածաշրջանում միակ ատոմային էլեկտրակայանի: Դա գտնվում է մարզկենտրոնից ոչ հեռու՝ Մեծամոր քաղաքում, որը կառուցվել է ատոմային էլեկտրակայանին սպասարկելու համար: Արմավիրի մարզում տարածված է միջատի մի տեսակ, որից հնում ստանում էին «որդան կարմիր» արժեքավոր ներկը:

Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում բարեբեր Արարատյան դաշտում: Մարզում տարիներ շարունակ մշակվել են խաղող, ծիրան, դեղձ, սալոր, բանջար-բոստանային կուլտուրաներ: Վերջին տարիներին մարզում զարգանում են ձկնային տնտեսությունները, որոնց բուծած ձուկը մեծ պահանջարկ ունի հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: Մարզում են տեղակայված հանրապետական նշանակության երկու կարևորագույն կառույցներ՝ ՀԱԷԿ-ը և Զվարթնոց օդանավակայանը:

ԱՐՄԱՎԻՐ

Տարածքը՝ 8,510 կմ2
Բնակչությունը՝ 32,034 մարդ
Տնտեսության առաջատար ճյուղերը՝
արդյունաբերություն, գյուղատնտեսություն

Արմավիր քաղաքը հիմնադրվել է 1931 թվականին: Արմավիրը եղել է Հայաստանի առաջին մայրաքաղաքը: Այն գտնվում է Երասխի ձախ ափին՝ Արարատյան դաշտում: Ուրարտական պետության անկումից հետո Արմավիրը շարունակել է գոյատևել, իսկ Քրիստոսից առաջ 4-րդ դարի վերջին դարձել է Արարատյան Հայկական թագավորության մայրաքաղաքը, որտեղ հաստատվել էին Երվանդունիները: Քրիստոսից առաջ 189թ., երբ Արտաշես Ա-ն հիմնադրեց Մեծ Հայքի թագավորությունը, Արմավիրը դարձավ նրա մայրաքաղաքը: Քրիստոսից առաջ III-II դդ. Արմավիրը տնտեսական, մշակութային և պաշտամունքային խոշոր կենտրոն էր: Նախկինում ունեցել է Սարդարապատ, Հոկտեմբերյան անվանումները, իսկ 1995 թվականին վերանվանվել է Արմավիր: Արմավիր քաղաքի առաջին գլխավոր հատակագիծը կազմել է Ալ. Թամանյանը:

Քաղաքում բնակվում են նաև ռուսներ, քրդեր, եզդիներ, ասորիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Արմավիրում գործում են պետական ենթակայության մարզային կառույցներ, որոնք զբաղվում են էներգամատակարարման, գազամատակարարաման, անվտանգության և օրինականության պահպանման, հարկային քաղաքականության, փոստային և հեռախոսային կապի, բուժսպասարկման, սանիտարական հսկողության, ջրամատակարարման և այլ հարցերով: Գործում է 10 միջնակարգ դպրոց, 12 մսուր-մանկապարտեզ, 1 համալսարան, 2 քոլեջ, 3 մարզադպրոց, 1 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց և այլն:

ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Արմավիրի բժշկական քոլեջը հիմնադրվել է 1996 թվականին՝ որպես Երևանի թիվ 2 բժշկական ուսումնարանի մասնաճյուղ: 2003թ. ուսումնարանի հիմքի վրա ստեղծվել է «Արմավիրի բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը:

2013թ. Արմավիրի բժշկական քոլեջում կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, ստեղծվել են ուսումնական պրոցեսի կազմակերպման առավել նպաստավոր պայմաններ: Նախատեսվում է ուսումնամեթոդական բազան համալրել դիդակտիկ նոր նյութերով, մուլյաժներով, տեխնիկական այլ միջոցներով:

Արմավիրի բժշկական քոլեջն ունի հարուստ գրադարան: Ուսանողները ապահովված են դասավանդվող բոլոր առարկաների դասագրքերով: Քոլեջում ուսուցումը վճարովի է: Այժմ քոլեջում ուսանողների թիվը 229 է, որն անցած տարվա համեմատ նվազել է: 2014թ.-ին քոլեջը կունենա 47 շրջանավարտ:

Քոլեջը չունի սեփական շենք, վարձակալել է մանկապարտեզի մասնաշենքը: Ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից մեկը լրացուցիչ ֆինանսական միջոցներ ձեռք բերելն է՝ դասավանդողների մասնագիտական վերապատրաստման շարունակական գործընթացը կազմակերպելու, ուսումնամեթոդական բազան թարմացնելու և նոր դիդակտիկ նյութերով ապահովելու համար:

Քոլեջում ստանում են հետևյալ մասնագիտությունները.

- 0406 Քույրական գործ, որակավորումը՝ բուժքույր,
- 0402 Մանկաբարձական գործ, որակավորումը՝ մանկաբարձ,
- 0416 Ատամնատեխնիկական գործ, որակավորումը՝ ատամնատեխնիկ:

ԱՐՄԱՎԻՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Արմավիրի արվեստի պետական քոլեջը հիմնադրվել է 1990 թվականին: Քոլեջի աշխատանքները նպատակաուղղված են միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստմանը, սովորողների գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու խորացմանը, մասնագիտական և կատարողական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ուսումնական գործընթացի կատարելագործմանն ու արդիականացմանը նպաստում է սերտ կապերի հաստատումը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Արմավիրի արվեստի պետական քոլեջը նաև մշակութային կենտրոն է, որտեղ մշտապես հյուրընկալվում են մարզ ժամանած տարբեր երկրների պատվիրակություններ, ճանաչված մշակութային, հոգևոր, քաղաքական և հասարակական գործիչներ:

Քոլեջի սաները մասնակցել են հանրապետական, միջազգային տարբեր մրցույթների, փառատոների և ստուգատեսների՝ արժանանալով տարբեր մրցանակների և խրախուսանքների:

Շրջանավարտների մի մասը, քոլեջն ավարտելուց հետո, աշխատանքի է անցնում քաղաքի և հարակից գյուղերի մանկական երաժշտական և գեղարվեստի դպրոցներում, ինչի արդյունքում մասամբ լուծվում է շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցը:

Քոլեջին կից գործում է պրակտիկայի բաժին, որտեղ սովորում է դպրոցահասակ մոտ 250 երեխա. Այն, ըստ էության, քոլեջի դիմորդների հիմնական բազան է:

2013թ. քոլեջը լիցենզավորել է, պարարվեստ մասնագիտությունը և կատարել է առաջին ընդունելությունը: Անցյալ տարիներին ուսումնական հաստատության սովորողների թիվը չի գերազանցել 100-ը, սակայն այժմ քոլեջում սովորում է 126 ուսանող:







Քոլեջում ստանում են հետևյալ մասնագիտությունները.

- 0501.01 Դաշնամուր, որակավորումը՝ կոնցերտմայստեր, համույթի կատարող, երաժշտական դպրոցի դասատու,
- 0501.02 Լարային գործիքներ, որակավորումը՝ երաժշտական դպրոցի դասատու, նվագախմբի և համույթի կատարող,
- 0501.03 Փողային և հարվածային գործիքներ, որակավորումը՝ երաժշտական դպրոցի դասատու, նվագախմբի և համույթի կատարող,
- 0501.04 Ժողովրդական գործիքներ, որակավորումը՝ երաժշտական դպրոցի դասատու, նվագախմբի և համույթի կատարող,
- 0502 Երգեցողություն, որակավորումը՝ երգչախմբի և համույթի կատարող,
- 0503 Երգչախմբավարություն, որակավորումը՝ երգ-երաժշտության ուսուցիչ, երաժշտական դպրոցի դասատու, երգչախմբի խմբավար,
- 0504 Երաժշտության տեսություն, որակավորումը՝ տեսական և երաժշտագիտական առարկաների դասատու,
- 0506 Պարարվեստ, որակավորումը՝ հայկական, դասական և ազգային պարերի, համույթի կատարող, մենակատար,
- 0512 Գեղանկարչություն, որակավորումը՝ գեղանկարիչ, գեղանկարչության ուսուցիչ,
- 0514 Դիզայն, որակավորումը՝ նկարիչ-ձևավորող:



ԱՐՄԱՎԻՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Արմավիրի պետական ինդուստրիալ – մանկավարժական քոլեջը հիմնադրվել է 1967 թվականին՝ որպես սննդի արդյունաբերության տեխնիկումի մասնաճյուղ: 1968 թվականից գործել է որպես Հոկտեմբերյանի տեխնոլոգիական տեխնիկում: Այն ունի երկու մասնաշենք և արհեստանոց:

1999թ. Հոկտեմբերյանի տեխնոլոգիական տեխնիկումի իրավահաջորդը դարձավ «Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ը:

2009-2010 ուսումնական տարում «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի միջոցներով նշված մասնագիտությունների դասընթացների իրականացման համար վերանորոգվել են ուսումնական հաստատության դասասենյակները, տրամադրվել է ուսումնական գույք և տեխնիկական միջոցներ:

2013թ. ՀՀ պետական միջոցներով վերանորոգվել է քոլեջի ուսումնական մասնաշենքը, սակայն առկա է ջեռուցման համակարգի անցկացման խնդիր, որն առաջացնում է ուսումնական գործընթացն այլ ժամկետներում կազմակերպելու անհրաժեշտություն:

Քոլեջն այժմ ունի մոտ 400 սովորող, նախորդ տարվա համեմատ նկատվում է սովորողների թվի աճ: 2013թ. քոլեջն ունեցել է 105 շրջանավարտ:

Քոլեջում ստանում են հետևյալ մասնագիտությունները.

Միջին մասնագիտական կրթությամբ՝

- 0313 Նախադպրոցական կրթություն, որակավորումը՝ նախադպրոցական հաստատության դաստիարակ,
- 0201 Իրավագիտություն, որակավորումը՝ իրավագետ,
- 0606 Ապահովագրական գործ, որակավորումը՝ ապահովագրական գործի մասնագետ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ՝

- 0605 Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում, որակավորումը՝ գործավար
- 0515 Զարդակիրառական արվեստ, որակավորումը՝ դերձակ – մոդելավորող
- 2311 Հասարակական սնունդ, որակավորումը՝ խոհարար
- 2203 Համակարգիչների շահագործում, որակավորումը՝ համակարգիչների օպերատոր






ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (ԷՋՄԻԱԾԻՆ)

Մակերես՝ 44կմ2
Բնակչություն՝ 51280 մարդ

Քաղաքային համայնք Արմավիրի մարզում: Վաղարշապատ է վերանվանվել 1991թ.: Երևանից գտնվում է 18, իսկ մարզկենտրոնից՝ 25 կմ հեռավորության վրա: 1982թ.-ից Էջմիածինը համարվում է թանգարանային և ճարտարապետական հատուկ պահպանության տակ եղող տարածք:

Տեղադրված է Արարատյան դաշտում, ծովի մակարդակից 880մ բարձրության վրա: Կլիման չոր է, խիստ ցամաքային: Վաղարշապատը և նրա շրջակայքը բնակելի են եղել դեռևս մ.թ.ա. 6-3-րդ հազարամյակներում: Նրա շրջակայքում են գտնվում Շրեշ բլուր, Մոխրաբլուր, Թեղուտ հնավայրերը: Քաղաքի մասին հնագույն արձանագրություն է թողել Ուրարտական թագավոր Ռուսա 2-րդը: Հայոց Երվանդունիների թագավորական տոհմից Երվանդ Սակավկյացի գահակալության օրոք Վարդգեսը քաղաքի տարածքում կառուցում է նոր ավան և կոչում իր անունով: Քաղաքն ունեցել է միջնաբերդ, Անահիտ-Արտեմիդի հեթանոսական տաճարը: Ներկայիս Հռիփսիմե եկեղեցու տեղում գտնվել է արևի աստված Միհրի մեհյանը:

Վաղարշապատը մշակութային վերելք է ապրում 5-րդ դարում, երբ դառնում է կաթողիկոսական կենտրոն:

Վաղարշապատի վանական կառույցների մեջ մտնում են սբ. Էջմիածնի Մայր տաճարը՝ կառուցված 303թ., սբ. Հռիփսիմե տաճարը, սբ. Շողակաթ, սբ. Գայանե եկեղեցիները: Այն ամենայն հայոց կաթողիկոսության ու հայոց կաթողիկոսի աթոռանիստն է: Մայր տաճարին կից գործում է հոգևոր ճեմարան: Այստեղ է ուսանել նաև հայ մեծ երգահան Կոմիտասը:

Քաղաքում գործում են հայրենագիտական, Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Մայր աթոռին կից եկեղեցական թանգարանը: Ունի զարգացած արդյունաբերություն, էլեկտրատեխնիկական սարքավորումների, սննդի արդյունաբերության ձեռնարկություններ:

Քաղաքում զարգանում է նաև տնտեսության մեկ այլ ճյուղ՝ գյուղատնտեսությունը, որի զարգացմանը նպաստել է ոռոգման համակարգերի կառուցումը: Հիմնական զբաղմունքը խաղողագործությունն է, պտղաբուծությունը, բանջարաբուծությունը: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ:

ՎԱՂԱՇԱՊԱՏԻ (ԷՋՄԻԱԾՆԻ) ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ուսումնարանը հիմնադրվել է 1975թ.: Ուսումնական հաստատության թիվ մեկ խնդիրը կապիտալ նորոգում է: 1990-ական թվականներից ի վեր փոխվել է միայն հաստատության տանիքը:

Ուսումնարանի ձեռքբերումներից է 2013-2014 ուստարում սովորողների քանակի ավելացումը: Ուսումնարանն այժմ ունի 102 սովորող և գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: 2012-2013 ուսումնական տարում ունեցել է 26 շրջանավարտ:

Ուսումնարանում ստանում են հետևյալ մասնագիտությունները.

- 3106 Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում, որակավորումը՝ տրակտորիստ-մեքենավար,
- 1207 Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա, որակավորումը՝ էլեկտրաեռակցող,
- 0608 Առևտրական գործ, որակավորումը՝ հսկիչ-գանձապահ, արդյունաբերական ապրանքների և սննդամթերքի վաճառող:

ՎԱՂԱՇԱՊԱՏԻ (ԷՋՄԻԱԾՆԻ) ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Քոլեջը (նախկինում էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկում) իր գործունեությունն սկսել է 1969 թվականից: Այդ տարի տեխնիկումը ընդունելություն է կատարել ,Գրադարանային գործե և ,Ակումբային միջոցառումների ռեժիսուրաե մասնագիտությունների գծով: Մի քանի տարի անց ավելացրել է նաև ,Բրոշյուրավորման, կազմարարության արտադրության տեխնոլոգիաե մասնագիտությունը:

1975-76 ուսումնական տարում տեխնիկումը, տեղափոխվելով ավելի ընդարձակ ու հարմարավետ շենք, իր մասնագիտությունների ցանկին ավելացրեց ևս մեկը՝ «Ժողովրդական գործիքների ինքնագործ խմբի կազմակերպում»: Այս մասնագիտության համար հրավիրվեցին անվանի երաժիշտներ ու այլ մասնագետներ:

Տեխնիկումը, լինելով տարածաշրջանում միակը իր մասնագիտությունների ցանկով, դիմորդներ էր ունենում հանրապետության բոլոր շրջաններից և հարևան հանրապետությունների հայաշատ վայրերից:

2007թ. քոլեջը անվանակոչվել է կրթության, մշակույթի անվանի գործիչ Վարդգես Համազասպյանի անունով:

Այսօր քոլեջում սովորում է 460 ուսանող, մինչդեռ անցյալ տարի սովորել է շուրջ 600 ուսանող: 2012-13 ուսումնական տարում քոլեջն ավարտել է 174 ուսանող:

Քոլեջի շենքը հին է, հարմարեցված ուսումնական պահանջներին: Քոլեջի լավագույն շրջանավարտները կարող են ընդունվել պետական բուհերի 2-րդ կամ 3-րդ կուրս հարակից մասնագիտությամբ՝ հարցազրույցով:

Քոլեջում ստանում են հետևյալ մասնագիտությունները.

- 0517 Գրադարանային գործ, որակավորումը՝ գրադարանավար,
- 0601 էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ, որակավորումը՝ հաշվապահ,
- 0604 Բանկային գործ, որակավորումը՝ բանկային գործի մասնագետ,
- 0608 Կոմերցիա (առևտուր ըստ տեսակների) , որակավորումը՝ կոմերսանտ,
- 2203 Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, որակավորումը՝ տեխնիկ (ծրագրավորող),
- 2301 Սպասարկման կազմակերպում, որակավորումը՝ մենեջեր,
- 3102 Գյուղատնտեսագիտություն, որակավորումը՝ գյուղատնտես:

«ՄԵԶ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ Է ՀԱՄՈԶԵԼ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ, ՈՐ ԱՅՍՏԵՂ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՈՐԱԿՅԱԼ ԿԱԴՐԵՐ»

Հարցազրույց Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Արթուր Եղիազարյանի հետ



Որպես տարածաշրջանային քոլեջ վերակազմավորելուց հետո ինչպիսի՞ բարեփոխումներ են իրականացվել Ձեր ուսումնական հաստատությունում:

Ներկայումս Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջը տարածաշրջանի ամենաբարեկարգ, նյութատեխնիկական հզոր բազա ունեցող ուսումնական հաստատությունն է: Քոլեջը, վերակազմավորվելուց հետո, գրեթե բոլոր մասնագիտություններով որդեգրեց նոր՝ կարողություններին միտված ուսուցման համակարգը, որին նպաստեց քոլեջի հարուստ նյութատեխնիկական բազան: Առանձնապես շահեկան են փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում, գյուղատնտեսագիտություն մասնագիտությունների ուսուցման արդյունավետության զարգացման համար ստեղծված լաբորատորիաները, անվտանգության և առաջին օգնության, ֆիզիկայի, քիմիայի կաբինետները: Բոլորովին վերջերս կառուցված գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ժամանակակից ջերմոցը բացառիկ հնարավորություն է ստեղծում մարզի ինտենսիվ զարգացող գյուղատնտեսության՝ այդ առաջնահերթ բնագավառի կադրեր պատրաստելու համար:

Որպես տարածաշրջանային քոլեջ՝ ո՞րն է Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի առանձնահատկությունը և առաքելությունը:

Քոլեջը լոկոմոտիվ-առաջնորդն է մարզում ինչպես դասախոսական կազմի առումով, այնպես էլ

դասապրոցեսի ժամանակ անհրաժեշտ սարքավորումների առկայությամբ, որի արդյունքում էլ ուսանողների բարձր մակարդակ ենք ապահովում: Տարածաշրջանային կոչվում է այն հանգամանքով պայմանավորված, որ այս ուսումնական հաստատության հնարավորություններից կարող են օգտվել մարզի մյուս համանման հաստատությունները: Այս ուղղությամբ արդեն որոշակի աշխատանքներ են տարվում. մարզի ուսումնական հաստատությունների տնօրենների համագործակցության հուշագիր ունենք, ըստ որի մեզանից յուրաքանչյուրը պարտավորվում է աջակցել մյուսներին:

Կարճաժամկետ վերապատրաստման ինչպիսի՞ ծրագրեր են արդեն իրականացվել քոլեջում և ինչպիսիների՞ կարիք է զգացվում:

Արմավիրի զբաղվածության կենտրոնի հետ համատեղ վերջին երկու տարիներին քոլեջում պարբերաբար իրականացվում են հաշվապահության և մենեջերների պատրաստման կարճաժամկետ դասընթացներ: Մենք ցանկանում ենք դրանք շարունակել, քանի որ քոլեջի համար էլ է ձեռնտու իրականացնել կարճաժամկետ դասընթացներ: Ցավոք սրտի, ուսանողությունը չի ցանկանում երկար ժամանակ տրամադրել ուսում ստանալուն: Նրանք ցանկանում են արագ և որակյալ կրթություն, որը ստիպում է ավելի մանրամասն և համակողմանի ուսումնասիրել կարճաժամկետ վերապատրաստման ծրագրերի կազմակերպման մեխանիզմները:

Այս տարի տարածաշրջանային քոլեջներում ներդրվեցին կարիերայի կենտրոններ: Ինչպիսի՞ն է նրանց աշխատանքը Ձեր քոլեջում:

Կարիերայի կենտրոնի նպատակն է ուսանողների ճիշտ ուղղորդումը աշխատանքի շուկայում: Կենտրոնն ուսումնասիրում է, թե որ մասնագիտությունները մեծ պահանջարկ ունեն մեր մարզում: Հենց այդ հետազոտությունների արդյունքում էլ քոլեջը որոշում է, թե ինչպիսի կարճաժամկետ դասընթացներ կազմակերպի: Այժմ ուսանողությունը հետաքրքրված է ֆուրշետ, սեղանի դիզայն, ֆլորիստիկա, մատնահարդահարում, դիմահարդարում մասնագիտություններով: Կարիերայի կենտրոնի առաջնային խնդիրներից է նաև մեր ուսանողների հետագա կարիերայի ուղուն հետևելը, իմանալը, թե ինչքանով ենք մենք արդյունավետ աշխատում:

Որո՞նք են հաստատության առաջնային խնդիրներն այսօր:

Մեր առաջնային խնդիրն է համոզել գործատուին, որ այստեղ պատրաստվում են որակյալ կադրեր: Այդ խնդիրը միշտ արդիական է. գործատուն չի պատկերացնում, որ դա հնարավոր է: Բացելով գինու գործարան՝ գործատուն չի ցանկանում այսօր ներդրում անել իր վաղվա կադրերի համար: Մենք Հայաստանում այն բացառիկ հաստատություններից ենք, որ պատրաստում ենք նման մասնագետներ: Սա է մեր հիմնական խնդիրը: Շենքային պայմանների մասին կարելի է ասել միայն, որ մարզադահլիճ չունենք, որտեղ ուսանողները կարողանան մարզվել ցուրտ եղանակին:

Համագործակցության ինչպիսի՞ եզրեր կան սոցիալական կենտրոնների գործընկերների հետ:

Զբաղվածության մարզային կենտրոնի մեր սոցիալական կենտրոնի գործընկերների համագործակցության նաև գործատուների պա-

հանջով փորձ է արվում կազմակերպել միջին մասնագիտական կրթական ծրագրերով առևտրի սպասարկման, պահածոների, հարավային պտղաբուծության չոր մրգերի նոր տեխնոլոգիաներով արտադրությունների մասնագետների պատրաստում:

Զբաղվածության մարզային կենտրոնի և սոցիալական գործընկերության հետ համագործակցության խորացումը տվեց իր պտուղները: Մեր շրջանավարտներից շատերը աշխատում են այդ բնագավառում: Արդեն երկրորդ տարին է, ինչ զբաղվածության մարզային կենտրոնի աջակցությամբ քոլեջում կազմակերպվում է կարճաժամկետ ուսուցում համակարգչային գործավարի և մենեջերի մասնագիտություններով:

Ո՞ր մասնագիտություններն են այժմ ավելի արդիական Արմավիրում, որոնք հնարավոր է ներառել միջին մասնագիտական կրթության համակարգում:

Արմավիրի մարզի գերակա ճյուղերից են խաղողագործությունը, գինեգործությունը և կոնյակագործությունը, որոնց զարգացման համար կադրեր պատրաստելու գործընթացը նոր պայմաններ է ստեղծել քոլեջում: Բացի այն, որ արտադրող, վերամշակող ձեռնարկություններում, ըստ նախապես կնքված պայմանագրերի, սովորողները արտադրական պրակտիկա են անցնում, անցյալ ուսումնական տարվանից նրանց ջանքերով մեկնարկել է գինեգործության և գարեջրի արտադրության կաբինետի ստեղծման դժվար գործընթացը:

Ի՞նչ նոր մասնագիտություններ եք նախատեսում ներդնել Ձեր քոլեջում:

Նախատեսվում է այս ուսումնական տարում կազմակերպել վարսավիրական, ֆուրշետային հյուրասիրության և հաշվապահի կարճաժամկետ ուսուցում:

	2007	2013
Ընդունվածների թիվը	159	114
Ուսանողների թիվը	496	410
Ամենաշատ պահանջարկ ունեցող մասնագիտությունը	0602 Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի), որակավորումը՝ ագրարային մենեջմենթ, 0601 էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի), որակավորումը՝ հաշվապահ:	0603 Ֆինանսներ (ըստ ճյուղերի), որակավորումը՝ ֆինանսիստ 3102 Գյուղատնտեսագիտություն, որակավորումը՝ գյուղատնտես:
Վերապատրաստված դասախոսների թիվը	23	42
Սոցիալական գործընկերները	ՄԱՊ Արմավիրի պահածոների գործարան	ՄԱՊ գինու կոնյակի գործարան «Լևոն» ՍՊԸ Հոկտեմբերյանի պահած. գործարան



«ՄԵՐ ՇԱՏ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԵՆՔ, ՔԱՆԻ ՈՐ ԱՐԴԵՆ ՈՒՆԵՆՔ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

«Մասնագիտական կրթություն և ուսուցում» հանդեսն այս անգամ այցելել է Արմավիրի մարզ: Ամսագրի «Ուսանողական կյանք» խորագիրն ունեցող էջի հերոսները դարձան Արմավիրի տարածաշրջանային քոլեջի ուսանողական խորհրդի անդամները:

Ինչպե՞ս ընտրեցիք քոլեջը:

Ռիմա Մելքոնյան, Իրավագիտություն, 2-րդ կուրս, 17տ. ՈՒԽ նախագահ

-Ես 9-րդ դասարանի բազայով եմ ընդունվել քոլեջ: Ավարտելուց հետո կունենամ մասնագիտություն: Մեր քոլեջը պայմանագրեր ունի տարբեր բուհերի հետ, և հեշտ կլինի այստեղից գնալ բարձրագույնում սովորելու:

Լիլիթ Գաբրիելյան, էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ, 2-րդ կուրս, 17տ.

- Այստեղ ուսուցումը լավ է կազմակերպվում: Մասնագիտական առարկաները դասավանդվում են բարձր մակարդակով: Բազմաթիվ մարդիկ, որոնք ավարտել են այն բաժինը, որտեղ հիմա ես եմ սովորում, արդեն աշխատում են:

Ռիմա Ալեքսանյան, Ֆինանսներ, 2-րդ կուրս, 17տ.

- Ամենամեծ առավելությունն այն է, որ ստանում եմ որակյալ կրթություն և արագորեն պատկերացում եմ կազմում իմ ընտրած մասնագիտության վերաբերյալ: Ունեմ մտածելու ժամանակ՝ արդյո՞ք պետք է ինձ այն, պետք է շարունակել և նույն մասնագիտությամբ ստանալ բարձրագույն կրթություն, թե՝ ոչ: Երկու տարի է, ինչ այստեղ եմ և համոզվել եմ, որ ճիշտ ուղղություն եմ ընտրել:

Հովհաննես Վարդանյան, Իրավագիտություն, 1-ին կուրս, 18տ.

- Դպրոցն ավարտելուց հետո եկել եմ այստեղ: Մտածեցի ուժերս սկզբից քոլեջում փորձել: Կրթու-

թյունն այստեղ շատ լավ է՝ համեմատած այլ կրթական հաստատությունների: Այստեղ կըրթությունը տրվում է համաչափ՝ հաշվի առնելով բոլորի առաջադիմությունը: Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների նկատմամբ չկա ակնհայտ բացասական վերաբերմունք, ընդհակառակը, ձգտում են նրանց էլ առաջ քաշել:

Ինչպիսի՞ն էր ճանապարհը դեպի քոլեջ: Հե՞շտ որոշվեց Ձեր այստեղ գալը:

Լիլիթ Գաբրիելյան

- Ես մեկ տարի ավագ դպրոցում եմ սովորել: Լրացուցիչ պարապմունքների էի գնում: Հետո մտածեցի, որ քոլեջ գալն ավելի նպատակահարմար է, թողեցի այդ ամենը և եկա այստեղ: Հիմա զգում եմ, որ ճիշտ եմ արել: Մեզանում արդեն չկա այն կարծրատիպը, թե քոլեջ գնալը վատ է: Շատ ժամանակ նույնիսկ նախանձով են նայում քոլեջում սովորողներին:

Ռիմա Ալեքսանյան

- Սկզբում ծնողներս ասացին, հետո ես էլ համոզվեցի, քանի որ այստեղից հեշտ կլինի բուհ ընդունվել: Այստեղ սովորելը ավելի լավ է: Մեր շատ հասակակիցներից տարբերվում ենք, քանի որ արդեն ունենք մասնագիտություն:

Ռիմա Մելքոնյան

- Իմ ընկերներից շատերը փոշմանում են, որ քոլեջ չեն եկել: Ես այս տարի ավարտում եմ՝ մասնագիտություն ստացած, իսկ իրենք նոր պետք է գնան մասնագիտություն ստանալու:

Հովհաննես Վարդանյան

- Մասնագիտությունս ես եմ ընտրել, ծնողներիս ասացի, իրենք էլ հետաքրքրվեցին, թե հետագայում ես աշխատանք կգտնեմ, թե ոչ: Եվ որոշվեց, որ սովորեմ քոլեջում:

Որտե՞ղ եք Ձեզ տեսնում 7 տարի հետո:

Լիլիթ Գաբրիելյան

- Ուզում եմ Եվրոպայում սովորել, սակայն անպայման կվերադառնամ հայրենիք: Կուզեի մեր քոլեջին կից բացել հաշվապահական ընկերություն, որտեղ ուսանողները կաշխատեին և փորձ ձեռք կբերեին:

Ռիմա Ալեքսանյան

- Քանի որ ֆինանսիստ եմ, իսկ մեզ մոտ ֆինանսիստները հիմնականում բանկերում են աշխատում, կուզենայի յոթ տարի հետո լավագույն բանկերից մեկում աշխատել՝ անկախ ոլորտից: Ժամանակը ցույց կտա՝ իմ ունակությունները որ բնագավառում են ավելի ուժեղ: Կցանկանայի մնալ Երևանում:

Ռիմա Մելքոնյան-

- Ես ընտրել եմ իրավագետի մասնագիտությունը և կցանկանայի աշխատել դատարանում՝ որպես դատապաշտպան:

Հովհաննես Վարդանյան

-Ինձ պատկերացնում եմ այս տարածաշրջանի լավագույն դատավորը:

Ուսխորհուրդն ի՞նչ է Ձեր կյանքում: Ինչպե՞ս է ազդում Ձեր ուսանողական կյանքի վրա:

Ռիմա Ալեքսանյան

- ՈՒԽ-ն ինձ համար այլ հասկացություն է, քանի որ առաջին կուրսից ուսխորհուրդում եմ:

Դա մեծ առավելություն էր ոչ միայն ինձ, այլև մեր կուրսի համար, քանի որ ՈՒԽ անդամը ներկայացնում է կուրսի խնդիրները, ցանկությունները ՈՒԽ նախագահին, որն էլ հասցնում է մեր ձայնը քոլեջի տնօրինությանը: Օրինակ եթե ցանկանում ենք կազմակերպել ինչ-որ միջոցառում, բաց դաս, կամ ասենք՝ ուսանողներից մեկը վարձավճարի մուծման խնդիր ունի, այդ խնդիրների մասին տնօրինությունը իմանում է ուսխորհրդից: ՈՒԽ-ն այդ հարցերը քննարկում է քոլեջի տնօրինության հետ և անպայման դրական լուծում է ստացվում:

Հովհաննես Վարդանյան

- ՈՒԽ-ն ինձ համար նոր ընկերներ ձեռք բերելու հնարավորություն է:

Լիլիթ Գաբրիելյան

- ՈՒԽ-ն հավաքական հասկացություն է, և չեմ ուզում այն անհատականացնել: Ինձ համար շատ կարևոր է ուսանողների համախմբվածությունը ինչ-որ հարցերի քննարկման, շատ միջոցառումների կազմակերպման հարցում:

Ռիմա Մելքոնյան

- ՈՒԽ-ի ամենակարևոր դերն այն է, որ ապահովում է ուսանողների և դասախոսների կապը: Մեր ՈՒԽ-ն շատ համախմբված է: Եվ ամենամեծ ձեռքբերումը կարող եմ համարել ուսանողների, ինչպես նաև դասախոսների վստահությունն ու հարգանքը: Այժմ քոլեջի տարածքում արկղեր ենք տեղադրել, ուսանողներն ըստ ցանկության մանրդրամներ են գցում: Հավաքված գումարով մանկատներից մեկին աջակցություն ենք ցույց տալու:

Ի՞նչ խնդիրներ կան այժմ քոլեջում, որ անհրաժեշտ է լուծել:

Ռիմա Ալեքսանյան

- Խնդիրներն այնքան աննշան են, որ խնդիր անվանել էլ չի կարելի: Ուսանողի համար այստեղ ամեն ինչ կա: Ուսանողին պետք է միայն գիտելիք ստանալ, ու այստեղ տալիս են այդ գիտելիքը: Մնում է նա վերցնի:

Ազատ ժամանակն ինչպե՞ս եք անցկացնում:

Լիլիթ Գաբրիելյան

- ՈՒԽ երեխաների հետ ենք լինում, ընկերների հետ:

Հովհաննես Վարդանյան

-Ազատ ժամանակ չի մնում, պարապմունքների եմ գնում՝ պարի, երաժշտության:

Ռիմա Ալեքսանյան

- Արմավիրում ազատ ժամանցի շատ վայրեր չկան, միայն սրճարաններն են: Չկա կինոթատրոն կամ պատկերասրահ, որ հնարավոր լինի հետաքրքիր ժամանակ անցկացնել:

Ռիմա Մելքոնյան

- Մեր քոլեջում ամենշաբաթյա կինոդիտումներ ենք կազմակերպում, որից հետո էլ քննարկում ենք այդ ֆիլմերը:



ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ՇՈՒՐՋՈՒՄ

2011 թվականից անդամակցելով զբոսաշրջային և հյուրանոցային քոլեջների եվրոպական ասոցիացիային՝ քոլեջն իր մշտական ներկայությունն է դրսևորել ասոցիացիայի կողմից կազմակերպված միջոցառումներին՝ ՄԿՈՒ համակարգի ուսանողների համար կազմակերպված մրցույթներին, տարեկան համաժողովներին, քննարկումներին:

2013թ. նոյեմբերի 10-15-ը կայացավ զբոսաշրջային և հյուրանոցային քոլեջների եվրոպական ասոցիացիայի 25-րդ տարեկան համաժողովը, որը կազմակերպվել էր Միջերկրական Ծովում՝ Կոստա Մեդիտերանիա նավում:

Համաժողովին մասնակցում էր նաեւ քոլեջի 15 հոգանոց պատվիրակությունը տնօրեն Արթուր Վարդանյանի գլխավորությամբ: Քոլեջի վարչական և դասախոսական կազմի ներկայացուցիչներից բացի պատվիրակության կազմում էին Բերդի պետական քոլեջի և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենները, ինչպես նաև ՀՀ այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Նավն իր երթուղին սկսեց Սավոնա նավահանգստից /Իտալիա/, այնուհետև ուղևորվեց Բարսելոնա և Պալմա դե Մայորկա /Իսպանիա/, որից հետո ուղևորվեց Մարսել /Ֆրանսիա/, այնուհետեւ վերադարձավ Սավոնա նավահանգիստ:

Տնօրեն Ա.Վարդանյանը՝ որպես ազգային ներկայացուցիչ, մասնակցեց ասոցիացիայի գլխավոր ասամբլեայի և գործադիր խորհրդի նիստերին, որտեղ կայացան ասամբլեայի նախագահի նոր ընտրություններ, քննարկվեց և հաստատվեց 2014 թ. միջոցառումների ծրագիրն ու գործողությունների պլանը:

Պատվիրակությունը նաև ներկա գտնվեց ասոցիացիայի կողմից կազմակեպված խոհարարության, հյուրանոցային գործի, զբոսաշրջության և գինու համտեսման ուսանողների մրցույթին:

Համաժողովի ավարտին մասնակիցներին շնորհվեց մասնակցության հավաստագիր:

ԽՈՀԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՏԵՐ-ԿԼԱՍ ՔՈԼԵՋՆԵՐԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խոհարարության գծով վարպետության դասեր իրականացվեցին 2013թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 1-ը Երևանի զբոսաշրջության սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում: Դասերը կազմակերպվել էին ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԳՐԵՖ (դասավանդողներ առանց սահմանների) կազմակերպության կողմից:

«Խոհարարի մասնագիտության դասավանդման դիդակտիկա» կոչվող վարպետության դասերի նպատակն էր Հայաստանի մի շարք քոլեջների և արհեստագործական ուսումնարանների խոհարարության դասախոսներին ծանոթացնել խոհարարություն դասավանդելու ֆրանսիական մեթոդներին:

Դասընթացին մասնակցում էին ՀՀ ՄԿՈՒ 10 հաստատություններից թեկնածուներ, որոնք հնարավորություն ունեին ծանոթանալ Ֆրանսիայում խոհարարության դասավանդման բնագավառում կիրառվող մեթոդներին, ինչպես նաև կատարել փորձի փոխանակում ֆրանսիացի փորձագետ-դասախոսի հետ:

Վարպետության դասերը վարելու նպատակով ԳՐԵՖ-ը Հայաստան էր հրավիրել Ֆրանսիայի Շալ Լե Օ քաղաքի հյուրընկալության լիցեյի խոհարարության դասախոս պարոն Էրիկ Ժաքիեին: Վերջինս խոհարարություն է դասավանդում 16-20 տարեկան ուսանողների, որոնք, դպրոցն ավարտելով, ստանում են որակավորման 4-րդ աստիճան: Երկար տարիներ աշխատելով Կանադայի բարձրակարգ ռեստորաններից մեկում որպես շեֆ - խոհարար՝ այժմ նա ղեկավարում է իրենց լիցեյի և Կանադայի հյուրընկալության լիցեյներից մեկի՝ քույր լիցեյներ դառնալու գործընթացը:

Վարպետության դասերի ընթացքում պարոն Ժաքիեն անդրադարձավ հետևյալ թեմաներին.

1) Խոհարարության գործնական դասեր՝ Ֆրանսիայի հյուրընկալության դպրոցներում իրականացվող գործնական դասերի օրինակով:

Հայ դասախոսներին առաջարկվեց հանդես գալ ուսանողների դերում և ուսումնասիրել երեք բաղադրատոմս՝ հավի բալոտին, ձիթապտղի յուղով կարտոֆիլի պյուրե և խնձորի խրթխրթան: Այս բաղադրատոմսերի վրա հիմնվելով՝ պարոն Ժաքիեն ներկայացրեց խոհարարության դասի այն բոլոր փուլերը, որոնց իրականացման արդյունքում ուսանողը կարողանում է ինքնուրույն պատրաստել այս կամ այն ճաշատեսակը: Պարոն Ժաքիեն ընդգծեց, որ դասավանդման իր ընտրած մեթոդերի բուն նպատակը ուսանողին առավելագույն ինքնուրույնության հասցնելն է:

2) Շալ Լե Օ հյուրընկալության դպրոցում

նկարահանված տեսանյութերի ցուցադրություն և մեկնաբանում:

Տեսանյութերի միջոցով վարպետության դասերի մասնակիցներին ներկայացվեցին Շալ Լե Օ դպրոցը և այնտեղ իրականացվող խոհարարության դասերը: Առանձին տեսանյութերով ներկայացվեցին առաջին կուրսի ուսանողների դասերը, որտեղ ուսանողները նոր-նոր սովորում են ճիշտ օգտվել խոհանոցի պարագաներից, և ավարտական կուրսի ուսանողների դասերը, որտեղ ուսանողներն ինքնուրույն են և դասախոսի միջամտության կարիք գրեթե չեն զգում:

Մասնակիցների հիացմունքին արժանացավ հատկապես ուսումնակիրառական ռեստորանի գործունեությունը ցուցադրող տեսանյութը: Ֆրանսիայի հյուրընկալության լիցեյները պարտադիր ունեն ուսումնակիրառական ռեստորաններ, որտեղ մատուցվում են ուսանողների պատրաստած կերակրատեսակները:

3) Ինչպիսին պետք է լինի խոհարարություն դասավանդելու համար նախատեսված խոհանոցը:

Դասախոսները ծանոթացան այն սկզբունքներին, որոնց հետևում են Եվրոպայում՝ որևէ ռեստորանի կամ հյուրընկալության լիցեյի խոհանոցը կահավորելիս:



Վարպետության մեկշաբաթյա դասերը դասախոսների վերապատրաստման առաջին փուլն էր: Հետագա փուլերում նախատեսվում է պրակտիկա Հայաստանի բարձրակարգ ռեստորաններում, ինչպես նաև մասնագիտական գրականության մշակում:

«Քոլեջի սաները մեզ արդյունք են տալիս, բայց դե գոնե լսարանի հատակը ֆանդված չլինի»

Երևանի մշակույթի պետական քոլեջն ուսուցանվող մասնագիտություններով յուրահատուկ տեղ է գրավում Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում: Այս տարի լրացել է քոլեջի հիմնադրման 61-րդ տարեդարձը: Սկզբում այն անվանակոչվել է Կինոմեխանիկների տեխնիկում, այնուհետև՝ Կինոտեխնիկների, որից հետո անվանվել է Երևանի մշակույթի պետական քոլեջ:

Քոլեջի տնօրենն է ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Նադեժդա Սարգսյանը: «Մասնագիտական կրթություն և ուսուցում» հանդեսը հարցազրույց վերցրեց քոլեջի տնօրենից:

Ո՞րը կհամարեք քոլեջի գերխնդիրը:

Երևանի մշակույթի պետական քոլեջի առաջնային խնդիրը շենքային պայմանների վիճակն է. այն ունի հրատապ լուծման կարիք: Այսօր դասընթացն անցկացվում է անհարմար լսարաններում, որտեղ թե՛ հատակը, թե՛ ուսումնական և տեխնիկական գույքը շատ հին են և արդեն պիտանի չեն ուսումնական գործընթացի համար: Գրեթե ոչինչ չունենք: Հաստատության խնդիրն է տալ լավագույն մասնագետներ:

Ի՞նչ քայլեր են իրականացվում քոլեջի խնդիրները լուծելու համար:

ՀՀ կառավարության որոշմամբ Երևանի մշակույթի պետական քոլեջն այս տարի ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությունից անցավ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության, և մեծ հույսեր ունենք, որ քոլեջի վիճակն ի վերջո կբարելավվի: ԿԳ նախարարությունն արդեն տեղյակ է, թե որոնք են հաստատության խնդիրները: Առաջին օրերին մեզ հաջողվեց ուսումնական գույքի հարց



լուծել: Մեծ հույսեր ունենք, որ առաջիկայում նոր հնարավորություններ կլինեն:

Ո՞րն է քոլեջի հիմնական առավելությունը:

Ուսումնական տարվա սկզբում ուսանողների հետ հանդիպելիս իմ խոսքում ամեն անգամ նշում եմ, որ «Բիթքլզ» համաշխարհային խումբն էլ է սկսել նկուղային պայմաններից, սակայն դա քիչ է: Մենք հետևում ենք մեր շրջանավարտների առաջընթացին և կարող ենք հպարտությամբ ասել, որ մեր սաներից շատերն ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ, շատերն են իրենց մասնագիտությամբ աշխատանքի անցնում:

Մեր հիմնական նպատակն է բարձրացնել նրանց գիտելիքի մակարդակը: Մեր սաներն այստեղից հեռանում են գիտելիքի բավականին մեծ պաշարով, որն իրենց պետք է գալիս ինչպես բուհում, այնպես էլ աշխատանքում: Մենք ապահովում ենք պրակտիկա տարբեր լրատվամիջոցներում, համագործակցության պայմանագրեր ունենք մի շարք կազմակերպությունների հետ:

Կա՞ն մասնագիտություններ, որոնք ցանկանում եք ներառել ուսումնական ծրագրում:

Ուսումնական հաստատությունում այժմ իրականացվում է ուսուցում յոթ մասնագիտության գծով, սակայն արտերկրում այսօր կան արդիական մասնագիտություններ, որոնք Հայաստանում դեռ չկան, սակայն մասնագետների կարիք արդեն զգացվում է: Ցանկություն կա ավելացնել հաստատությունում ուսուցանվող մասնագիտությունների թիվը, մասնավորապես՝ ձայնային և լուսային ռեժիսուրա, մասնագիտական գրիմ: Ունենք մասնագիտություններ, որոնց գծով սերնդափոխություն չկա: Առաջարկությունն արդեն արել ենք, հուսով եմ, որ մյուս տարի կստացվի այս մասնագիտությունները ներառել քոլեջում:

Ուսանողների թիվը ավելանո՞ւմ է, թե՝ ոչ:

Այժմ ունենք 280 ուսանող. ուսումնական գործընթացը կազմակերպելու պայմանները թույլ չեն տալիս ավելացնել ուսանողների թիվը: Նույն մասնաշենքում գործում է նաև Երևանի էստրադային և ջազային պետական քոլեջը. նույն մասնաշենքում երկու քոլեջը նպատակահարմար չէ:

Մեր ուսանողներն սկզբում մտածում են, թե այստեղ ուսուցումն ավելի ազատ է ու հանգիստ, սակայն ընդհակառակը, մենք բավականին խիստ ենք ու պահանջկոտ, այդ գիտեն նաև նրանց ծնողները և ողջունում են ու, նաև դրանով պայմանավորված, մենք ունենում ենք բավականին մեծ թվով դիմորդներ: Կարող եմ ասել, որ այս ուսումնական հաստատությունն ապահովում է աշխատաշուկային համապատասխան և բավականին որակյալ կրթություն:



Անետա Ալավերդյան

Վանաձորի բժշկական պետական քոլեջ «Քույրական գործ» բաժին

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Գիշեր է,խավար լռություն,բայց մթության մեջ
Ականջս շոյող ձայներ եմ լսում,
Մեկ ուրախանում,մեկ էլ տխրում եմ,
Ու թվում թե երեխա եմ ես,
Անմիտ ու վախկոտ,լալկան երեխա,
Որ վախենում է ոտքը վերմակից
Հանկարծ դուրս հանի՝մի բազմագլուխ
Նրա ոտքերը կտրի ու տանի,
Ես էլ եմ նման հենց այդպիսի մի գիժ երեխայի,
Ձեռքերով ամուր գլուխս բռնում,
Ու ականջներս սեղմում եմ ուժգին,
Որ էլ չլսեմ սրտիս հարազատ,
Բայց օտար դարձած հոգու ձայները,
Վերմակս այնպես քաշում եմ գլխիս,
Որ էլ չտեսնեմ, որ մթության մեջ նա է թափառում,
Նա, այդ ճիվաղը,այդ քառվանկանին,
Որ դարձել է իմ և իմ թշնամին,
Որ թույլ չի տալիս ես ինձ հետ հաշտվեմ,
Նա, այդ կործանիչ խելագարության հասցնող ճամփան,
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ, որ թվում է թե սենյակիս պատին
Դաջել է իր ողջ պարունակությունը,
Որ նմանվում է չար մի կինոյի,
Ու հիշեցնում է, թե ի՞նչ չգիտեմ,
Կոպերս արդեն փակվում են դանդաղ,
Ու ինձ թվում է. արդեն կքնեմ, կքնեմ,
Բայց չէ, հայտնվում է նա,ու իր հետ բերում
Մի երկվանկանի՝տիրական անուն,
Երկու երեք ժամ արթուն եմ մնում,
Գուցե ավելի, արդեն չգիտեմ,
‹‹ՄԵԾ ՍԻՐՈ ՎԵՐՀՈՒՇ›› կինոն եմ նայում,
Ախր ի՞նչ կինո, որ չի ավարտվում,
Արդեն այս կինոն սերիալ է դառնում:

ԴՈՒ ՕԳՆԱԿԱՆ ԵՂԻ՛Ր

Դու օգնական եղի՛ր, ամենասո՛ւրբ Աստված,
Եվ չքողնես երբեք, որ նա մենակ մնա,
Թեկուզ եթե դառնամ ես աղոթքդ չասված՝
Թող որ նա գեթ քեզ հետ թաքուն մտերմանա:

Դու պահապան եղի՛ր, ամենասո՛ւրբ Աստված,
Չքողնես երբևէ տխրությամբ դառնանա,
Թեկուզ ինքս դառնամ մեծ մեղքերով բարձված,
Դու չքողնես, որ նա ցավին ընտելանա:

Դու տուր նրան միայն բարի օրեր կյանքում,
Եթե նույնիսկ պիտի ցավով ես վճարեմ,
Եթե նրա անկեղծ երջանկության դիմաց՝
Արցունքներս պիտ տամ, հոգիս վաճառեմ:

ՏԽՈՒՐ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՍԱԲԱՑԸ

Թեպետ չգիտեմ
Ի՞նչ է կատարվում
Հիմա մեր միջև,
Ու չեմ հասկանում
Իմաստն այս
Լիքն ու դատարկ տանջանքի,
Ինչ-որ հզոր բան,
Որ փոխում է իմ
Անփոփոխ կյանքը,
Շատ հակասական
Խառնաշփոթ է,
Որ ամենավատ
Հիվանդության պես
Դանդաղ տանջում է,
Բայց...չի սպանում,
Եվ միայն մի բառ՝
Իմ հզոր կամքը,
Որ թույլ չի տալիս
Ազատություն տալ
Այս ցնդած երգին,
Ազատ արձակել
Բառերն այն խորին,
Որ սպասված են,
Այն երանելին՝
Այն ‹‹սիրում եմ››-ը,
Որը հիմնովին
Պիտի փոփոխեր
Կյանքը երկուսիս,
Եվ հավատում եմ
Տխուր փողոցում
Մի օր արևը
Դանդաղ կշողա,
Վրա կհասնի
Ոչ թե իրական
Իմ ու քո օրը,
Այլ մեր երկուսի՝
Հենց մեր ապագան,
Մեր լուսաբացը,
Եվ կհամարվի
Իրարից հեռու
Վերջինն ակամա:



Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջի նախկին ուսանող 23-ամյա Հենրիկ Զոզանյանն այժմ աշխատում է գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոնում, միաժամանակ սովորում է Հայաստանի ագրարային պետական համալսարանի հողաշինարարություն և հողային կադաստր բաժնում:

«ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՁ ՇԱՏ Է ԳՐԱՎԵԼ ԴԵՌ ՄԱՆԿՈՒՑ»

Ինչպե՞ս որոշեցիր հողաշինարար դառնալ:

Հայրիկս հողաշինարար է, և փոքր հասակից մասնակից եմ եղել նրա աշխատանքներին, իր հետ գնացել տեսել եմ, թե ինչպես են աշխատում: Քարտեզագրությունն ինձ շատ է գրավել դեռ մանկուց: 8-9տ էի, երբ մի օր հայրս իր ընկերների հետ եկավ. գնալու էին չափագրման, ինձ էլ իրենց հետ տարան: Այդ ժամանակ ինձ շատ գրավեցին նրանց գործիքները, թեոդոլիտը, որով իրականացնում են չափագրումները: Թեոդոլիտը ռուսական սարք է, որն այն ժամանակ մեծ տարածում ուներ, իսկ այժմ ավելի շատ օգտագործվում է գերմանական տախոմետր չափագրման սարքը, որն ավելի էլեկտրոնացված մեխանիզմ ունի:

Ինչպե՞ս հայտնվեցիր քոլեջում:

Նախքան դպրոցն ավարտելը արդեն համոզված էի, որ շարունակելու եմ հորս գործը: Հայրիկս ինձ տարավ այն ուսումնական հաստատությունը, որտեղ ինքն էր սովորել՝ Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջի հողաշինարարություն և հողային կադաստր բաժին: Այժմ սովորում եմ Ագրարային համալսարանի նույն բաժնի հեռակա ուսուցման երրորդ կուրսում:

Ո՞րն է քոլեջի ամենամեծ առավելությունը:

Հիմնական մասնագիտական գիտելիքները ես ստացել եմ քոլեջում: Այնտեղ կային դասախոսներ, որոնք դասավանդել են իմ հայրիկին էլ: Բուհում արդեն հեշտ է, ես ունեմ հիմնական բազան: Դասախոսներն այնպիսի մասնագետներ են, որոնք զուգահեռ աշխատում են իրենց մասնագիտությամբ: Մեզ ցույց էին տալիս գործիքները, թե ինչպես են աշխատում, որից հետո սկսվում էր պրակտիկան: Առաջին պրակտիկան արել ենք քոլեջի բակում, որից հետո Հայաստանի Գեոդեզիայի ինստիտուտում: Ես մեր կուրսի ուսանողներին

շատ եմ օգնում, քանի որ ավարտել եմ համապատասխան քոլեջը:

Ինչպե՞ս ես գտել այս աշխատանքը:

Հորս խորհրդով եմ եկել այստեղ: Համալսարանի առաջին կուրսում էի սովորում, երբ իմացա, որ ազատ աշխատատեղ կար: Դիմեցի, հարցազրույցն հաջող անցնելուց հետո ինձ ընդունեցին աշխատանքի: Այստեղ ծանոթ ունենալը դեր չի խաղում, քանի որ պետք է ունենաս գիտելիք ոլորտի մասին: Եթե հանկարծ սխալվես հաշվարկներում, դա մեծ խնդիր է: Պրակտիկաս անցել էր այստեղ, և շատ հետաքրքրված էի հենց այդ ժամանակվանից, ուզում էի անպայման աշխատել այստեղ:

Հողաշինարարի համար մարդկային ամենակարևոր հատկանիշը ո՞րն է:

Մարդկանց հետ շփվելուլ կարողությունը, որ մարդկանց ճիշտ խորհուրդներ տաս: Կան մարդիկ, որոնք իրենց հողատարածքի տեղը չգիտեն, պետք է օգնել, որ իմանան:

Քո աշխատանքի ամենահետաքրքիր պահը ո՞րն է:

Ավելի շատ սիրում եմ դրսում աշխատել, երբ գնում եմ չափագրման աշխատանքներ անելու: Մենք այժմ ճշտում ենք Հայաստանի ամբողջ տարածքում գոյություն ունեցող սահմանները: Հետոգալիս ենք այդ չափագրման արդյունքները տալիս մյուս աշխատակիցներին, որոնք դրանք ներմուծում են համակարգիչ: Արդյունքում ստացվում է քարտեզ:

Ինչպիսի՞ն է մթնոլորտը աշխատավայրում:

Ես աշխատում եմ հողաշինարարության բաժնում: Հիմնականում աշխատակիցները միջին տարիքի են, բայց կան նաև ինձնից մի քանի տարով մեծ աշխատողներ: Մեծահասակները ճանաչում են ինձ դեռ փոքրուց և հենց սկզբից լավ հարաբերությունների մեջ ենք:

Ի՞նչ խորհուրդ կտաս այն աշակերտներին, որոնք դեռ չեն կողմնորոշվել ուր գնալ սովորելու:

Լավ կլինի գնալ սկզբում քոլեջ, քանի որ դրանից հետո բուհում ավելի հեշտ է և մատուցվող գիտելիքը՝ մատչելի:

Ի՞նչ է պետք Հայաստանում աշխատանք գտնելու համար:

Ամենակարևորը համապատասխան ոլորտի գիտելիքն է: Եթե քոլեջում սովորեն, վերցնեն այն, ինչ իրենց տալիս են, ապա անպայման աշխատանք կգտնեն: Իմ մասնագիտությամբ կարելի է աշխատել նաև անշարժ գույքի գործակալություններում:





21-րդ դարում, երբ մրգերն ու բանջարեղենը պարունակում են մեծ քանակությամբ քիմիական հավելումներ, էկոլոգիապես մաքուր սնունդը, մշակաբույսերը մեծ պահանջարկ են վայելում: Հայաստանն ընտրել է գյուղատնտեսության ճյուղը՝ որպես զարգացման հիմնական ուղղություններից մեկը: Հայրենական արտադրությամբ զբաղվող ընկերություններում պրոֆեսիոնալ գյուղատնտեսի կարիք միշտ էլ կա:

Խորհրդային միությունից հետո Հայաստանում հողատարածքները սեփականաշնորհվել են, այդ իսկ պատճառով գյուղատնտեսի մասնագիտության պահանջարկը թերևս նվազել է, սակայն այն գյուղացին, որն ուզում է լավ բերքատվություն ստանալ, պետք է լինի գրագետ և իր գործում գիտակ:

Գյուղատնտեսի մասնագիտության առաջին անհրաժեշտ պայմանը սերն է հողի նկատմամբ: Ինչքան էլ միայն իր փորձով գյուղացին հասնում է հաջողությունների, այնուամենայնիվ, լավ գյուղատնտեսի խորհրդի կարիքը միշտ էլ զգացվում է:

Միջին մասնագիտական կրթության մոդուլային ծրագրով ուսուցումն ավելի մեծ պրակտիկա է ապահովվում, որը գյուղատնտեսի համար ամենակարևորն է, այսինքն՝ հողի հետ աշխատելով հողի լեզուն հասկանալը: Պրակտիկայի ընթացքում նրանք աշխատում են ինչպես հողագործների, այնպես էլ գյուղապետարանների հետ: Սակայն արտադրական պրակտիկայի ընթացքում ուսանողները չեն ներառվում հողագործության ամբողջ ցիկլին, իսկ ուսումնական հաստատությանը կից գործող ջերմոցում աշխատելով՝ նրանք կհետևեն ամբողջ գործընթացին:

Հայաստանի տարբեր քոլեջներին կից կառուցված ջերմոցները մեծ նպաստ ունեն ուսուցման գործընթացում, քանի որ ապագա գյուղատնտեսները կարող են անմիջականորեն տեսնել՝ իրենց անցած տեսական գիտելիքները իրական կյանքում ինչպես են գործում:

Բացի ջերմոցից, ուսումնական հաստատությանն անհրաժեշտ է առանձին հողատարածք, որտեղ ապագա գյուղատնտեսները կմշակեն բույսեր և կհետևեն նրանց աճին:

ՄԿՈՒ հաստատություններում ապագա գյուղատնտեսներն ուսումնասիրում են հետևյալ առարկաները.

- Տնտեսագիտության հիմունքներ,
- Էկոլոգիայի հիմունքներ,
- Երկրագործության և հողագիտության հիմունքներ,

• Հողի մշակման համակարգերը և ագրոտեխնիկան,
• Պարարտանյութեր, նրա տեսակները և օգտագործումը,
• Բույսի կյանքին անհրաժեշտ գործոնները և նրանց ռեժիմները,
• Գյուղատնտեսական բեռների և արտադրանքի տեղափոխում, պահեստավորում և բաշխում,
• Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում,
• Մոլախոտերը և պայքարը դրանց դեմ,
• Պտղի և խաղողի տնկանյութի արտադրության տեխնոլոգիաներ,
• Մշակաբույսերի սերմերի արտադրության տեխնոլոգիաներ,
• Կերային մշակաբույսերի և բուսական ծագման կերերի արտադրության տեխնոլոգիաներ,
• Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում և պլանավորում,
• Պտղատու այգիների մշակության և բերքահավաքի տեխնոլոգիա,
• Խաղողի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաներ,
• Բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները,
• Բույսերի պաշտպանություն,
• Ցանքաշրջանառության համակարգեր և նրանց առանձնահատկությունները,
• Անասնապահական մթերքների և հումքի արտադրության տեխնոլոգիա,
• Գյուղատնտեսական արտադրության հաշվառում և հաշվետվությունների կազմում,
• Գյուղատնտեսական վիճակագրություն և տնտեսական գործունեության վերլուծություն,
• Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները,
• Մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիաները պաշտպանված գրունտի պայմաններում,
• Լանջերի վրա բազմամյա տնկարքների հիմնման տեխնոլոգիաները:

Գյուղատնտեսները մեր երկրում շատ կարևոր դեր ունեն գյուղապետարաններում, տարբեր ընկերություններում, որոնց արտադրանքը կապված է գյուղատնտեսության հետ, դրանցից են գինու, կոնյակի, պահածոների արտադրությամբ զբաղվող ընկերությունները: Գյուղատնտեսների պահանջարկ զգացվում է թունաքիմիկատների և պարարտանյութերի մասին տեղեկությունների հաղորդման գործում:

Հայաստանի Հանրապետությունում սկզբունքորեն փոխվել են աշխատանքային հարաբերությունների բնույթը, աշխատաշուկայի կարգավորման սկզբունքներն ու մեխանիզմները՝ կապված ազատ շուկայական հարաբերությունների անցման հետ, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի ձևավորման օրինաչափությունները: Մասնագիտությունների ու զբաղմունքների ոլորտը դարձել է առավել դինամիկ, բազմագործոն և դժվար կանխատեսելի, ինչը ստիպում է բարձրացնել աշխատաշուկայի և մասնագիտական կրթական համակարգի փոխադարձ կապը: Այս համատեքստում, որպես բնակչության զբաղվածության, աշխատաշուկայի արդյունավետ հավասարակշռության երկարաժամկետ ապահովման հեռանկարային միջոց, մեծ նշանակություն է ստանում մասնագիտական կողմնորոշումը, որը պետք է հիմնված լինի անհատի մասնագիտական նախընտրությունների ձևավորման հիմնական գործոնների ամբողջության և դրանք իրականացնելու ուղիների բազմակողմանի հաշվառման վրա:

ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող շարունակական և լայնածավալ բարեփոխումները, ի թիվս այլ նպատակների, միտված են նաև ապահովելու շրջանավարտների՝ աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը և իրենց կարողություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը:

Վերջին ժամանակներս հանրապետությունում՝ մասնավորապես Լոռու մարզում, աճել է այն պատանիների թիվը, որոնք ցանկանում են նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթություն ստանալ: Դրան նպաստել են նաև մասնագիտական կողմնորոշման իրազեկման համար այցերը հանրակրթական դպրոցներ: Մարզի պատանիների և երիտասարդների մոտ մեծ հետաքրքրություն են առաջացրել զարդակիրառական արվեստ, պարենամթերքի արտադրություն, եռակցման տեխնոլոգիա, շինարարություն և կենցաղային տնտեսություն մասնագիտությունները: Ներքին շուկայում պահանջարկի աճի միտում է նկատվում հյուսն, ատաղձագործ որակավորմամբ արհեստավորի նկատմամբ: Վերականգնվում են փայտանյութով իրեր պատրաստելու և աշխատանքներ կատարելու ավանդույթները, ինչը կապված է ոչ միայն դրա գեղեցիկ

տեքստուրայի և գունային էսթետիկ տեսքի, այլ նաև փայտանյութի էկոլոգիապես մաքուր և անվտանգ լինելու հետ:

Անցնելով գիտելիքի հաղորդման ուսումնառությունից կարողություններին միտված ուսումնառությանը՝ էլ ավելի հասկանալի է դարձել գործատուների նշած պահանջները արհեստավորի նկատմամբ, քանի որ իրենք ակտիվ մասնակցություն են ունենում ուսումնառության չափորոշիչների և ծրագրերի մշակման աշխատանքներին: Այսպիսի համագործակցությունը բերում է շուկայի պահանջած որակներով հյուսնի, ատաղձագործի պատրաստմանը:

Մշակված մոդուլները՝ «Ծառերի և փայտանյութերի հիմնական հատկությունների բնութագրման ունակություն», «Ձեռքի գործիքներով աշխատանքների հմտություններ», «Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ», «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ», «Դռների պատրաստման հմտություններ» և «Պատուհանների պատրաստման հմտություններ», նպաստում են ոչ միայն կարողություններին անհրաժեշտ գիտելիքների իմացությանը, այլև դրանց կիրառմամբ գործնական աշխատանքներով կարողությունների ձեռք բերմանը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հյուսն - ատաղձագործ արհեստավորի պատրաստման համար կիրառվող ինչպես ոչ մոդուլային ծրագրերին («Փայտամշակման տեխնոլոգիա», «Փայտանյութագիտություն», «Փայտամշակման սարքեր, սարքավորումներ, գործիքներ»), այնպես էլ մոդուլային ծրագրերի միջառարկայական կապին: Ուսուցումը կազմակերպվում է մոդուլային ծրագրերի վերջնական արդյունքների ձեռքբերմամբ (հյուսն, ատաղձագործ որակավորմամբ չափորոշիչը անցնում է փորձագիտական շրջան):

Համապատասխան ձեռնարկություններում կազմակերպված արտադրական պրակտիկաների ընթացքում սովորողները իրենց արհեստավարժությամբ աչքի են ընկնում, ինչի արդյունքն է ձեռնարկությունների՝ ուսումնարանի շրջանավարտներով համալրումը, ինչն էլ վկայում է հյուսն-ատաղձագործների պահանջարկի մասին:

«ԳԻՆԻՆ ՉԻ ՀԱՂԹԵԼ, ՅԱՆԿԱԼԻ Է՝ ԿԻՆԸ ՀԱՂԹԻ»

Արտաշատցի Հենրիկ Բաբայանն արդեն 20 տարի է, ինչ զբաղվում է գինեգործությամբ: Նրանց ընտանիքում միշտ զբաղվել են խաղողագործությամբ, օղեթորումով և Հենրիկն էլ դեռ մանկուց պապիկի հետ մասնակցել է օղեթորմանը:

«Սեփականաշնորհման տարիներին ինձ բաժին ընկավ տեխնիկական խաղողի այգի, որոնցից պատրաստում էին գինի և օղի»,- ասում է 44-ամյա Հենրիկը, որը սովորել է գյուղատնտեսական ինստիտուտի պտղագործության և գինեգործության բաժնում:

Հմուտ գինեգործը բացատրում է, որ խաղողի տարբեր տեսակներ կան՝ սեղանի և տեխնիկական: Կան տեսակներ, որոնցից լավ գինի չի ստացվում, դրանք սեղանի խաղողի տեսակներն են: Տեխնիկական տեսակի մեջ ևս կան տարբեր սորտեր՝ տարբեր որակի գինի ստանալու համար: Սեղանի գինի ստանալու համար խաղողի քաղցրությունը պետք է շատ չլինի, թթվայնությունը պետք բարձր լինի:

«Ինչքան էլ սովորես, կան գաղտնիքներ, որոնք փոխանցվում են սերնդից սերունդ, որոնք ձեռք են բերվում տարիների փորձով: Բայց, այնուամենայնիվ, առանց նախնական մասնագիտական գիտելիքի դժվար է: Փորձը պետք է ապացուցի քո գիտելիքի ճշմարտացիությունը, թե քո գիտելիքն ինչքանով է ճիշտ»,- համոզված է գինեգործը:

Հենրիկի ընտանիքն ունի նաև տնամերձ խաղողի այգի, որի խնամքով զբաղվում է ամբողջ ընտանիքը: Իսկ տան մառանում՝ տարբեր տեսակի և տարիքի գինիների տակառների վերևում, փայլփլում են հայկական քաղցր խաղողների հարուստ տեսակները՝ կախեթը, ոսկեհատը, գառան դմակը, մսխալին:

«Հին հույներից է դեռ գալիս այդ փորձը. նրանք թոռում էին խաղողը, նոր պատրաստում գինին, դրանից ստացվում է շատ թունդ, քաղցր գինի: Խաղողն ինչքան թողնում ես չորանա, հյութաքամվի, այնքան քաղցր, աղանդերային գինի կստացվի: Իսկ սեղանի գինու համար պետք է անմիջապես քաղած խաղողն օգտագործել: Սեղանի գինու համար շատ քաղցր խաղող անհրաժեշտ չէ»,- պատմում է Հենրիկը, որը գերադասում է անխառն խաղողի տեսակները, ոչ թե սելեկցիայով ստացված խաղողը:

Վաստակավոր գինեգործը համոզված է. եթե սեփական ձեռքերով չես աճեցնում խաղողը, երբեք լավ որակի գինի չես ստանա. ,Քո ամբողջ էներգիան փոխանցվում է գինուն, այն կենդանի խմիչք է, շնչում է, նորմալ պայմաններում չպահելու դեպքում գինին մեռնում է, շատ անդուր համ է ունենում այդ դեպքում: Ինչպես ջուրը, այնպես էլ գինին պարունակում է ինֆորմացիա, և պետք է զգույշ լինել նրա հետ: Գինիների հետ խոսում եմ (ծիծաղում է): Նրանք իմ բարկությունից փոթորկվում, պղտորվում են: Վատ խոսակցությունը նրանց վրա ազդում է:

Գինեգործի ամենակարևոր գաղտնիքը նա համարում է գինու պահպանումը. «Ստեղծելն ավելի հեշտ է, քան պահպանելը»:

Մառանում դրված բազմատեսակ գինիների տակառների, տարբեր մրգերից պատրաստած օղիների մեջ իր տեղն ունի Հենրիկի պատրաստած առաջին կոնյակը, որն արդեն քսան տարեկան է:



«Այն պատրաստված է գինու նստվածքից, որն ավելի որակով կոնյակի հումք է»,-ասում է Հենրիկը՝ բացելով 20-ամյա կոնյակի ահռելի շիշը: Կոնյակի բույրն անմիջապես պարուրում է բոլորիս. «Կոնյակի բույրը հրեշտակների բաժինն է»,- բացատրում է հմուտ գինեգործը:

Նա չի ցանկանում բացի խաղողից այլ մրգից գինի ստանալ. «Աստվածաշնչից է գալիս, որ պետք է խաղողից գինի ստանալ: Ճիշտ չէ այլ մրգից ստանալ գինին»:

Հենրիկը խոստովանում է, որ գինու վաճառքով չի զբաղվում: Ով գիտի, գալիս է գինի գնելու, բայց ընտանիքը ծիրան և խաղող է հանձնում գործարան կամ պարզապես վաճառում:

Տարիներ շարունակ հետևում է Հայաստանում գինեգործության ասպարեզում տեղի ունեցած փոփոխություններին. «Նախկինում օղին ավելի շատ էր վաճառվում, սակայն վերջին տարիներին մարդիկ սկսել են ավելի շատ որակյալ գինի գնել, սակայն հայերի մոտ գինի խմելու հատուկ մշակույթ դեռևս չկա»:

Խորհրդային տարիներին Հայաստանում հատեցին լավ որակի խաղողը և փոխարենը տնկեցին մեծ բերքատվություն ունեցող խաղողի տեսակները, որոնցից լավ որակի գինի չես կարող ստանալ:

«Այժմ այնպիսի մովեր (վազեր) կան, որոնք տալիս են մինչև 30 կգ խաղող: Սակայն դա լավ գինու երաշխիք չէ: Մեկ վազից պետք է քիչ խաղող դուրս գա, որպեսզի իր մեջ պահպանի խաղողին բնորոշ արոմատիկ հատկանիշները»:

Միջազգային շուկա մտնելու համար գինեգործը համոզված է. «Պետք է լավ որակի գինի ունենալ և ուժեղ պետություն: Հայաստանին ճանաչում են կոնյակով, սակայն գինի ավելի հեշտ է արտադրել և արտահանել, քանի որ դա մեծ ծախսերի հետ կապված չէ»:

Այն երիտասարդներին, որոնք ցանկանում են գինեգործությամբ զբաղվել, խորհուրդ է տալիս սիրել հողի հետ աշխատանքը, խաղողի մշակումը (եթե չսիրեց,

չի կարող լավ որակի գինի ստանալ): Պետք է իմանան հողի լեզուն (Արարատյան դաշտավայրում հողերի տեսակները փոփոխվում են մի քանի կիլոմետրի վրա): Սակայն համոզված է, որ սովորելն ինչքան էլ օգնի, պետք է շնորհը տրված լինի ի վերուստ:

Սերնդափոխությանը վերաբերվում է այսպես. «Ես ամուսնացած չեմ, բայց սխալ է մտածել, որ քո որդիները պետք է շարունակեն քո գործը: Իհարկե, հաճելի է, բայց որդին պետք է ինքնուրույն ընտրի իր ուղին: Օրինակ իմ ծնողները երկուսն էլ մանկավարժ են, բայց ես չեմ կարողանա այդ գործն անել»:

Գինու բաժակները լցված են, մնում է կենացը. «Մաղթենք բոլորիս հաջողություն, բոլորիս սեղանները լիքը լինեն, գինով լինեն: Ինչպես ասում է մեծ բանաստեղծը. «Ինչը կհաղթի կյանքում հերոսին, թե չլինեն կինն ու գինին»: Գինին չի հաղթել, ցանկալի է՝ կինը հաղթի»:

ԱՐԴԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հեղինակ՝ Ս.Մկրտչյան

Այս ձեռնարկը միտված է մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների ուսուցումը շաղկապել գործնական կարողությունների ձևավորման հետ, ընդ որում, գիտելիքների ուսուցումը ձեռնարկում դիտարկվում է կարողությունների ենթատեքստում:

Ձեռնարկը մշակված է հետևյալ մոդուլների համար՝

- Զարդարվեստ: Էսքիզ: Կոմպոզիցիա: Պարզ երկրաչափական և աքսոնոմետրիկ կառուցումներ:
- Չափանշում, գծանշում, նկարի, էսքիզի տեղակայում նախապատրաստվածքի վրա:
- Փայտանյութի հիմնական կտրվածքներով, հատկություններով փայտատեսակների տարբերակում, արատների տեսակների որոշում:
- Փորագրողի աշխատատեղի նախապատրաստում, փորագրման և հատման հիմնական գործիքներ, հարմարանքներ:
- Փայտանյութի նախապատրաստվածքի վրա երկկողմանի հանվածքով փորման աշխատանքներ:
- Փայտանյութի նախապատրաստվածքի վրա կոր, շրջանագծային հանվածքով փորման աշխատանքներ: Հարթփորվածքային փորագրման աշխատանքներ:
- Երկրաչափական փորվածքների հիմնական տարրերի փորակման աշխատանքներ:
- Տրամատային և երկրաչափական փորվածքների հիմնական տարրերով համակցված զարդանախշով փայտե գեղարվեստական իրի պատրաստում:
- Հարթաքանդակային փորվածքներով փայտյա գեղարվեստական իրի պատրաստում:
- Միջանցիկ հանովի և խորքապաստառը հեռացված փորվածքներով գեղարվեստական իրերի պատրաստում և նորոգում:

Ձեռնարկն ունի հավելված բաժիններ, որտեղ ներկայացված են ինչպես սաների, այնպես էլ հեղինակավոր վարպետների ստեղծագործությունների նկարներ, որպես օրինակ և ուղեցույց:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
Հեղինակներ՝ Ռ.Ա.Թովմասյան, Գ.Ռ.Թովմասյան

Սույն ձեռնարկը նախատեսված է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են հիմնարար գիտելիքներ ստանալ տնտեսագիտության վերաբերյալ:

Ուսումնական ձեռնարկում շարադրված են տնտեսագիտության տեսության հիմնական դրույթները, քննարկվել են մարդկանց միջև առաջացող տնտեսական հարաբերությունները՝ կապված նյութական բարիքների ու ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման հետ, տնտեսական երևույթներին և գործընթացներին բնորոշ օրինաչափությունները:

Տնտեսագիտության տեսության ուսումնասիրությունը թույլ կտա ձեռք բերել գիտելիքներ, ձևավորել տնտեսագիտական մտածելակերպ, ինչը հնարավորություն կընձեռի գնահատել տնտեսական իրավիճակը և ընտրել ճիշտ տնտեսական գործելակերպ:

Տնտեսագիտական գիտելիքները թույլ կտան պատասխանել այնպիսի հարցերի, թե ինչ է արտադրությունը, ապրանքը, փողը, շուկան, առաջարկն ու պահանջարկը, գինը, մրցակցությունը, տոկոսը, կապիտալը, ինֆլյացիան, բյուջեն, բանկը և վարկը, գործազրկությունը, ինչպես ստանալ առավելագույն արդյունք նվազագույն ծախսումներով, և այլն:

Ձեռնարկում լուսաբանվում են տնտեսագիտության տեսական և գործնական խնդիրները: Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ առկա համառոտ եզրակացությունները նպատակ ունեն ամրապնդելու, իսկ ինքնաստուգման հարցերը և թեստային առաջադրանքները՝ ստուգելու ուսանողի ստացած գիտելիքները:

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
Հեղինակ՝ Ա. Հովհաննիսյան

Փականագործական-գործիքագործական աշխատանքների վերաբերյալ ձեռնարկի նպատակն է նպաստել ներկայացված ուսումնառության նյութերով սովորողների մոտ ձևավորելու փականագործական գործույթների իրականացման ունակություններ և հմտություններ:

Հայաստանում ՄԿՈՒ համակարգում գործող ուսումնական հաստատություններում իրականացվում են ուսումնական ծրագրերի բարեփոխումների փուլ, ինչը նպատակ ունի գիտելիք հաղորդող ծրագրերից անցում կատարել կարողությանը միտված մոդուլային ծրագրերին: Այդ ծրագրերը իրականացնելու համար ներդրվել են մասնագիտությունների որակավորումների պետական կրթական չափորոշիչներ և դրանց համապատասխան ձեռնարկներ: Սույն ձեռնարկը նախատեսվում է օժանդակել 1211 «Սարքավորումների տեխնիկական շահագործում» մասնագիտության «Փականագործ-գործիքագործ» որակավորման «Թույլտվածքներ և նստեցվածքներ, անհարթություններ, չափիչ, չափանշման գործիքներ և չափումներ կատարելու ունակություն» և «Փականագործական աշխատանքների կատարում» մոդուլներով ուսումնառության կազմակերպմանը:

Ձեռնարկում ներկայացվում է «Փականագործական աշխատանքների կատարում» մոդուլով նախատեսված ուսումնառության արդյունքների կատարման չափանիշներից բխող կարողությունների ձեռք բերման համար նախատեսված ուսումնառության նյութերը: Ձեռք բերելով, օրինակ՝ ներխարտոցում, հարմարեցում, հարմարակցում, կիպահեղկում փականագործական գործույթներ կատարելու հմտություններ, սովորողը հետագայում կարող է կատարել գործիքների և դրոշմների պատրաստման փականագործական-գործիքագործական աշխատանքներ:

Ձեռնարկում ներկայացված գործնական ուսումնառության նյութերը բխում են տեսական նյութերից և հույս կա, որ դրանք կնպաստեն սովորողների կարողությունների ձեռք բերմանը ներկայացված փականագործական գործույթների իրականացման աշխատանքներում:

ՌԱԴԻՈ-ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեղինակ՝ Ա.Նազարյան

Ուսումնական ձեռնարկը «Ռադիոհեռուստատեսային սարքավորումների վերանորոգման և սպասարկման հմտություններ» նախատեսված է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման ու տեխնիկայի ոլորտներում մասնագիտացող ուսանողների մասնագիտական գործառույթների իրականավման համար գիտելիքների և գործնական կարողությունների ձևավորման համար:

Ձեռնարկը օգտակար է նաև համապատասխան գործառույթներ իրականացնող մասնագետների համար: Ձեռնարկն ընդգրկում է «Վերանորոգման աշխատանքներում չափիչ ստուգիչ սարքավորումների գործիքների օգտագործման հմտություններ», «Ռադիոէլեկտրոնային սարքավորումների հիմնական հանգույցների ֆունկցիոնալ նշանակվածությունը», «Հեռուստացույցների վերանորոգման և սպասարկման հմտություններ», «Ձայնագրման սարքավորումների վերանորոգման և սպասարկման հմտություններ» մոդուլների պետական կրթական չափորոշիչի պահանջներն ապահովող տեսական նյութեր, առաջադրանքներ, դիտակտիկ նյութեր ուսանողների համար մեթոդական ցուցումներ: Ուսումնական ձեռնարկը համապատասխանում է ՀՀ կրթության ազգային կենտրոնի կողմից մշակված կրթական չափորոշիչների պահանջներին:

Ձեռնարկը ներառում է տեսական նյութեր, սխեմաներ, գծապատկերներ, աղյուսակներ որոնք կօգնեն ուսանողին համակողմանիորեն յուրացնել դասավանդվող նյութը: Ներկայումս, չկա որևէ բնագավառ, որտեղ չեն օգտագործվում էիեկտրոնիկային սարքեր և դրանց կիրառմամբ ավտոմատիկայի և հաշվիչ տեխնիկայի, ինֆորմացիոն չափիչ և ռադիոտեխնիկայի, կենցաղային նշանակության տարբեր սարքավորումներ: Ձեռնարկը նվիրված է ինֆորմացիոն էլեկտրոնիկային:

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ, ՄԱՐՔԵԹԻՆԳ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
Հեղինակ՝ Մ.Մարգարյան

Ավտոմոբիլային տրանսպորտի զարգացումը ուղղակի կախված է նաև կադրերի՝ մասնավորապես տեխնիկների տնտեսագիտական գիտելիքների մակարդակից:

Սույն ձեռնարկի նպատակն է միջին մասնագիտական ոլորտի ուսանողներին՝ ավտոտրանսպորտի ապագա տեխնիկներին, տալ տնտեսագիտական գիտելիքներ և նրանց մոտ ձևավորել ավտոմոբիլային տրանսպորտի ձեռնարկությունների և դրանց ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպման, կառավարման, հաշվառման, արտադրատնտեսական, ֆինանսական գործունեության ցուցանիշների հաշվարկման, արտադրության արդյունավետության գնահատման գործնական կարողություններ:

«Ավտոմոբիլային տրանսպորտի էկոնոմիկա, կառավարում, մարքեթինգ» ուսումնական ձեռնարկը նախատեսված է միջին մասնագիտական 2401 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ավտոտրանսպորտում)» մասնագիտության ուսանողների և դասավանդողների համար: Ձեռնարկում ընդգրկված են «Մարքեթինգը և կառավարումը ավտոտրանսպորտում» և «Տրանսպորտային աշխատանքների հաշվետվություն և արդյունքների գնահատում» մոդուլների արդյունքների կատարման չափանիշներին համապատասխանող տեսական նյութեր և գործնական առաջադրանքներ:

Ձեռնարկը բաղկացած է չորս բաժիններից:

- Ավտոտրանսպորտի էկոնոմիկա,
- Ավտոտրանսպորտի կառավարում,
- ԱՏՁ-ի մարքեթինգային ռազմավարությունը,
- Հաշվետարության հիմունքները:

Ձեռնարկում զետեղված թեստերը, խնդիրները և գործնական առաջադրանքները կնպաստեն նյութի դյուրին յուրացմանը և ուսանողների մոտ համապատասխան գործնական կարողությունների զարգացմանն ու ամրապնդմանը:

ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ
Հեղինակներ՝ Ս. Չիբուխչյան, Լ. Զաքարյան

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման գործում կարևոր դեր ունի տրանսպորտը, որը տնտեսության կարևորագույն ռազմավարական ոլորտներից մեկն է: Ժամանակակից ավտոմոբիլներին առաջադրվում են վառելիքային շահավետության, երթևեկության և բնապահպանական անվտանգության բավական խիստ պահանջներ, որոնք ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական կարևոր նշանակություն:

Ժամանակակից ավտոմոբիլների և տրակտորների շարժիչները լինում են ջերմային և էլեկտրական: Էլեկտրական շարժիչները կարող են սնուցում ստանալ օդային միջավայրում հոսանքից կամ մալուխի միջոցով՝ մարտկոցից: Ժամանակակից ավտոմոբիլների վրա հիմնականում տեղադրվում են ջերմային շարժիչներ, որոնցում վառելիքի խառնուրդն այրվում է շարժիչի մեջ, որի պատճառով էլ դրանք կոչվում են ներքին այրման շարժիչներ (ՆԱՇ): Այս տիպի շարժիչներից են մխոցային, ռեակտիվային և ռոտորային շարժիչները և գազային տուրբինները: Ներքին այրման շարժիչները որոշակի փոփոխություններից հետո տեղադրվում են նաև կոմբայնների, էլեկտրա-կան գեներատորների և մաքրիչների վրա:

ԽՄՈՐՄԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
Հեղինակ՝ Ա.Դովլաթյան, Խ.Սարգսյան

Հայաստանի զարգացման հեռանկարային ծրագրերում զգալի տեղ է հատկացված գինեգործությանը, ընդ որում, Հայաստանի բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս ազգաբնակչությանը՝ զբաղվելու գինեգործությամբ, որն առաջադրում է նաև միջին մասնագիտական կրթությամբ որակյալ կադրերի պահանջարկ:

Սույն ձեռնարկի մշակման նպատակն է՝ ստեղծել ուսումնառության նյութերի ամբողջություն, որը հնարավորություն կտա որակյալ կադրեր պատրաստել տվյալ մասնագիտության գծով:

Ձեռնարկի օգնությամբ «Խմորման արտադրության տեխնոլոգիաներ և գինեգործություն» միջին, «Գինեգործություն և հյութերի արտադրություն» նախնական մասնագիտությունների ուսանողները կկարողանան անհրաժեշտ և համակարգված գիտելիքների տիրապետման միջոցով հասնել դրանց գործնական կիրառությանը: Ձեռնարկը ուսումնառության նյութերի աբողջություն է՝ ժամանակակից տեխնիկայի և աշխատաշուկայի զարգացումներին համահունչ մասնագետներ պատրաստելու համար: Այն դասավանդողներին և սովորողներին հնարավորություն կտա առավել տեսանելի և կիրառելի դարձնել խմորման արտադրությունների տեխնոլոգիաների առկա նորամուծությունները: Ձեռնարկը համարվում է 2-րդ մաս «Խմորման արտադրության տեխնոլոգիաներ և գինեգործություն» մասնագիտության ուսումնասիրման համար, 1-ին մասն ընդգրկում է «Գինու արտադրության կազմակերպման պատմությունը և գինիների տեսակները և դասակարգում», «Խաղողի մթերում և վերամշակում», «Քաղցուի պարզեցում և խմորում», «Փլուշի թրմեցում և մասնակի կամ լրիվ խմորում» բաժինները:

Յուրաքանչյուր բաժնի համար հատկացված առաջադրանքներն ու խնդիրները նպաստում են ուսանողների ինքնուրույն գործողությունների միջոցով սովորելուն: Յուրաքանչյուր թեմա ամփոփվում է ինքնաստուգման հարցերով:

ՈՐՄՆԱԴԻՐ
Հեղինակ՝ է.Գալստյան

Սույն ձեռնարկը նախատեսվում է օժանդակել 2902 «Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում» մասնագիտության «Որմնադիր» որակավորման մոդուլներով ուսումնառության կազմակերպմանը:

Ձեռնարկի մեջ ընդգրկված են հետևյալ բաժինները.

- Շինարարական նյութեր որմնային աշխատանքների իրականացման համար:
- Որմնային աշխատանքներում կիրառվող գործիքներ և սարքվորումներ:
- Շարվածքի կատարումը կանոնավոր ձևի բնական և արհեստական քարերով:
- Շարվածքի կատարումը խամքարից և խամքարբետոնից:
- Շարվածքի կատարումը մշակված բնական քարերով:

ՏԱՆԻՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեղինակ՝ Արմինե Ղուլյան

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2906 «Տանիքագործական աշխատանքների իրականացում» մասնագիտացման սովորողների համար:

Ձեռնարկի մեջ ընդգրկված են հետևյալ բաժինները.

- Գլանափաթեթավոր և մածիկային նյութերից ծածկույթների իրականացման տեխնոլոգիա,
- Ոչ մետաղական թերթային և մանրահատավոր նյութերից ծածկույթների իրականացման տեխնոլոգիա,
- Մետաղական նյութերից ծածկույթների իրականացման տեխնոլոգիա ուսումնական մոդուլների յուրացման տեսական հիմքն ապահովելու համար:

Ձեռնարկում թեմաների շարադրման տրամաբանական հաջորդականությունը տարբերվում է ուսումնական մոդուլների արդյունքների և դրանց ենթակետերի հերթականությունից:

ՀԱՏԱԿԻ, ՏԱՆԻՔԻ ԵՎ ԴՌՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
Հեղինակ՝ Ա.Հովհաննիսյան, Վ.Քոչարյան

Հյուսնական, ատաղձագործական, փայտի փորագրման, տանիքի. հատակի փայտե շինվածքամասերի պատրաստման աշխատանքների վերաբերյալ ձեռնարկի նպատակն է նպաստել ներկայացված ուսումնառության նյութերով սովորողների մոտ ձևավորելու փականագործական գործույթների իրականացման ունակություններ և հմտություններ:

ՀՀ-ում ՄԿՈՒ համակարգի կողմից մշակվել են մասնագիտական կրթական չափորոշիչներ, որոնք ներդրվում են մասնագիտական ուսումնական հաստատություններ, դրանց համապատասխան ուսումնառություն կազմակերպելու համար: Այդ չափորոշիչների նպատակն է գիտելիքներ հաղորդող ուսումնառությունից անցում կատարել կարողություններին միտված ուսումնառությանը:

Ձեռնարկում ներկայացվում է լողաքներով ներսի և արտաքին դռների պատրաստման գործնական աշխատանքերը, տանիքի և հատակի փայտե շինվածքամասերի պատրաստումը՝ զուգակցելով ծպեղի և հատակի պատրաստման գործույթներով: Մեծ ուշադրություն է դարձվում որպես հյուսն, ատաղձագործ արհեստավորի պատրաստման համար ձեռքի գործիքներով աշխատանքներին՝ իր արհեստավարժության արդյունքներին լիիրավ տիրապետելու նպատակով:

Ձեռնարկում նպատակահարմար գտնվեց ընդգրկել ուսումնառության նյութեր այսպես կոչված փորագրման ,այբուբենիե վերաբերյալ:

ՋԵՐՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱԹՍԱՅԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ
Հեղինակ՝ Ա.Սահակյան

Այս ուսումնական ձեռնարկը նախատեսված է 2915 «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարերի տեխնիկական շահագործում» նախնական մասնագիտական կրթության (արհեստագործական) «Գազային սարքավորումների շահագործման և նորոգման փականագործ» որակավորում ստացող սովորողների, 2915 «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում» միջին մասնագիտական կրթության «Տեխնիկ» որակավորում ստացող ուսանողների, ինչպես նաև 1005 «Ջերմաէլեկտրակայաններ» միջին մասնագիտական կրթության «Տեխնիկ-ջերմատեխնիկ» որակավորում ստացող ուսանողների համար:

«Ջերմային էլեկտրական կայանների կաթսայական ագրեգատներ» ուսումնական ձեռնարկը կարող է օգտակար լինել ինչպես համապատասխան բաժինների ուսանողների, գազի բնագավառում աշխատողների, գազասպառողների, այնպես նաև բոլոր նրանց համար, ովքեր գերադասում են իմանալ գազային անվտանգության կանոնները, աշխատանքի անվտանգության կանոնները, ապրել ու աշխատել անվտանգ, ծանոթանալ աշխատանքի սանիտարիային և հիգիենային, տեղեկություն ունենալ շրջապատող աշխարհի տեխնածին ու տարերային երևույթներից, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել առաջին օգնություն՝ կենսագործունեության անվտանգության խաթարման ու խափանման հետևանքով տուժածներին, կազմել պատկերացում ՋԷԿ-ի գլխավոր ագրեգատի՝ շոգեկաթսայի աշխատանքի սկզբունքի և սխեմաների վերաբերյալ:

Ձեռնարկի կառուցվածքի և բովանդակության համար հիմք են ծառայել բոլոր այն գրքերը, որոնց ցանկը ներկայացվել է վերջում, ինչպես նաև՝ Հրազդան ՋԷԿ-ում կատարված փաստացի փորձարկման արդյունքները:

ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄ, ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
Հեղինակ՝ Լաուրա Քամալյան

Այս ուսումնական ձեռնարկում ներկայացված է «էլեկտրատեղակայանքների տեղակայում, շահագործում և վերանորոգում» և «Լուսավորման տեխնիկա» մոդուլները:

Գրքի առաջին մասում ներկայացված է էլեկտարական էներգիայի հաղորդաբաշխման էլեկտրատեղակայանքների շահագործման, վերանորոգման և փորձարկման աշխատանքների կատարումը: Նկարագրված է նաև բաշխիչ սարքավորումները, ենթակայանները և համապատասխան տեխնիկական սպասարկման միջոցները:

Տրված է նաև էլեկտարական էներգիայի հաղորդաբաշխման համակարգի դրույթները, որոնք վերաբերվում են փոփոխական հոսանքի էլեկտրատեղակայանքների հաղորդաբաշխման միջոցների (մալուխներ, օդային գծեր) մոնտաժային աշխատանքներին, էլեկտրական տեղակայանքների՝ տրնսֆորմատորային ենթակայանների, էլեկտրահաղորդման գծերի, բարձր և ցածր լարման բաշխիչ սարքավորումների և դրանց տարրերի տեղակայումը, շահագործումը և վերանորոգումը:

Գրքի երկրորդ մասում ներկայացված են լուսավորման տեխնիկայի սարքավորումները, տիպերը, դրանց աշխատանքը: Ներկայացված են լամպերի տեսակները և իրենց կառուցվածքները, արհեստական լուսավորման աղբյուրները, լուսատեխնիկական և դրանց էլեկտրատեխնիկական հաշվարկները, լուսավորության սնման սխեմաները:

ԼԱՆԴՇԱՖՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՐՑԵՐ
Հեղինակներ՝ Գ.Մկրտչյան, Ե.Մկրտչյան, Զ.Մկրտչյան

Ներկայացվող ձեռնարկը նախատեսված է արհեստագործական ուսումնարաններում և քոլեջներում սովորողների, ինչպես նաև «Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ» առարկան դասավանդող մանկավարժների համար: Ձեռնարկը շոշափում է համապատասխան առարկայական ծրագրով նախատեսված բոլոր հարցերը և թեմատիկ կառուցվածքով միտված է Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող պահանջների քննարկմանը:

«Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ» դասընթացի առարկայական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով 2004թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» հիմնադրույթներն ու հոդվածները, մասնավորապես ազգային միջոցառումներին վերաբերող 2-րդ գլխի հատուկ միջոցառումներին նվիրված 6-րդ հոդվածի պահանջները: